Ճանաչի՛ր ինքդ քեզ

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 26.10.2022թ. չորեքշաբթի թիվ 45 (1070)

Պ ա տ ե ր ա զ մ

Ի՞նչ է *պատերազմը*: *Ամենավատ բանն աշխարհում*՝ իսկույն կասի յուրաքանչյուր օրինավոր քաղաքացի: Պատմաբանները կփորձեն այն սահմանել՝ ընդգրկելով պատճառահետեւանքային հանգամանքների եւ դրդապատճառների ամբողջությունը: Եվ, այնուամենայնիվ, ի՞նչ է *պատերազմը. բռնկած ողջ տարածքում համընդհանուր փոխոչնչացում*: Բայց նաեւ՝ *համընդհանուր ճիգ, պայքար՝* **վասն հավատի, վասն հայրենյաց, վասն գոյատեւման...** Եվ առերեւույթ ամենասարսափելին անգամ կարող է դառնալ... **սրբազան**: *Սրբազան պատերազմ*... Մեր պատմությունը լի է սրբազան պատերազմներով: Ո՛չ երբեք **ընդդեմ** *«անհավատների»* եւ ո՛չ երբեք՝ ի նպատակ մյուս ազգերի ոչնչացման, ստորացման, նվաստացման... կամ տարածքների բռնազավթման: Այլ՝ միայն եւ միայն ***հանուն*** *հավատի, հանուն հայրենիքի, հանուն տեսակի պահպանման*: Համաշխարհային պատմությունն էլ պատերազմների գնահատման այս սկզբունքն ունի. դիտելով բոլոր *ընդդեմ* պատերազմները՝ **նզովյալ** եւ բոլոր *հանուն* պատերազմները՝ **սրբազան**:

1999 թվականի հոկտեմբերի 27-ին Հայոց խորհրդարանում տեղի ունեցած սահմռկեցուցիչ ոճիրը միայն անձերի գլխատում չէր, այլ՝ *Հայոց պետականության ոչնչացման փորձ*: Ասել է, թե՝ ***պատերազմի*** *հայտարարում ամենքիս*... Եվ մենք, ուզենք, թե չուզենք, պիտի ընդունենք այդ *պատերազմը* ու մեր թշնամիներին պիտի փնտրենք բոլոր նրանց մեջ, ովքեր **շահագրգիռ են** մեր դժբախտություններով, ում ձեռնտու չէ *մեր գոյությունը, մեր հզորացումը, մեր իրավունքների վերականգնումը*... Եվ նույնիսկ այս դեպքում դարձյալ մեր կռիվը ***ընդդեմ*** չէ, անգամ՝ անարգ թշնամու կամ ստոր դավաճանի: Մեր պատերազմը ***հանուն*** է, *հանուն այն ամենի, ինչի դեմ ուղղված էին հոկտեմբերի 27-ի կրակոցները*: Եվ մեր ***գիտակցված*** *պատերազմը*, ժամանակների անվերջության մեջ ընդմիշտ մնալով *սրբազան* եւ *օրինյալ*, հավերժելու է որպես **ապրելու կերպ** եւ **գոյության առաքելություն՝ վասն Բարու, վասն Լույսի, վասն Տեսակի պահպանման**:

Գ. Մ.

Խորհրդարան

Կրթության շահառուները եւ պատասխանատուն ամենքս ենք

Կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագրի վերջնանպատակն է ձեւավորել ազգային եւ համամարդկային արժեքների վրա հիմնված, ՀՀ զարգացմանը միտված, արդյունավետ եւ միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգ: ՀՀ ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանն** այս մասին ընդգծել է Աժ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի կազմակերպած՝ *«Հայաստանի Հանրապետության կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին»* օրենքի նախագծի քննարկման ժամանակ:

Քննարկմանը մասնակցել են նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալներ **Ժաննա Անդրեասյանը, Արթուր Մարտիրոսյանը** եւ **Կարեն Թռչունյանը:** Նրանք անդրադարձել են հնչած մտահոգություններին, պատասխանել պատգամավորների եւ քննարկմանը ներկա ոլորտի մասնագետների հարցերին:

շարունակությունը՝ էջ 2

«Տարվա լավագույնները»

Հայտնի են մրցանակակիրները

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունն ամփոփել է *«Տարվա լավագույնները»* մրցույթի արդյունքները, որոնց հիման վրա կպարգեւատրվեն ծրագրերի հեղինակները: Մրցույթի նպատակն է՝ խրախուսել հանրակրթական եւ նախադպրոցական ուսումնական հաստատությունների մասնագիտական խորը պատրաստվածություն ցուցաբերած, ստեղծագործական աշխատանք կատարող մանկավարժներին, տնօրեններին եւ ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատակիցներին, նպաստել նրանց կողմից նոր նախագծերի իրականացմանը, տարածել նրանց առաջավոր փորձը, ինչպես նաեւ նպաստել հասարակության մեջ վերջիններիս հեղինակության բարձրացմանը:

շարունակությունը՝ էջ 3

Մարզական

«Հաղթեցինք բոլորս»

ՀՀ ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը** ներկա է եղել Երեւանում անցկացված սամբոյի դեռահասների, պատանիների եւ երիտասարդների աշխարհի առաջնության փակման արարողությանն ու պարգեւատրել մրցումային վերջին օրը մեդալներ նվաճած մարզիկներին:

ԿԳՄՍ նախարարը շնորհավորել է մասնակիցներին առաջնության կայացման առթիվ՝ նշելով, որ միջազգային գործընկերները բարձր են գնահատել Երեւանում անցկացված մրցաշարը թե՛ մարզական, թե՛ կազմակերպչական առումով. *«Ավարտվեց սամբոյի դեռահասների, պատանիների եւ երիտասարդների աշխարհի առաջնությունը. հաղթեցինք բոլորս: Շուրջ 20 երկրների սամբոյի ֆեդերացիաների նախագահներ են ժամանել Հայաստան: Նրանք միակարծիք են, որ այս առաջնությունն անցկացվել է շատ բարձր եւ պրոֆեսիոնալ մակարդակով: Շատ շնորհակալ եմ բոլոր այն մարդկանց, որոնք անմնացորդ նվիրվեցին առաջնության պատշաճ կազմակերպմանը»:*

շարունակությունը՝ էջ 2

Տարկետում

Երկխոսություն կրթության եւ բանակի միջեւ

EducationUSA հայաստանյան գրասենյակը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի եւ Պաշտպանության նախարարությունների հետ համատեղ, 3-րդ տարին անընդմեջ իրականացնում է իրազեկում-քննարկում՝ *«Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու մասին»* օրենքում տեղ գտած փոփոխությունների վերաբերյալ:

Այս տարի քննարկումը տեղի է ունեցել *«Կրթության հիմքով տարկետում. երկխոսություն կրթության եւ բանակի միջեւ»* թեմայով, որը նպատակ ուներ տրամադրել տեղեկատվություն եւ պարզաբանում այն իրավական ակտերի վերաբերյալ, որոնցով կարգավորվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից կրթության հիմքով տարկետում ստանալու գործընթացը:

Հանդիպման խոսնակները՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության իրավաբանական վարչության պետ **Հովհաննես Գեւորգյանը,** պետի տեղակալ **Հակոբ Քնաջյանը,** ՊՆ Մարդու իրավունքների եւ բարեվարքության կենտրոնի, ինչպես նաեւ զինկոմիսարիատի ներկայացուցիչները պատասխանել են շուրջ 60 մասնակցի հնչեցրած 50-ից ավելի հարցերին: Ակտիվ մասնակիցների թվում էին *«Մրցունակ ուսանողների ակումբի»* բազմաթիվ ուսանողներ եւ շրջանավարտներ:

Հանդիպման մասնակիցներին, մասնավորապես, հետաքրքրել են՝ ինչո՞վ է տարկետման նոր կարգը տարբերվում հնից, ի՞նչ նախապայմանների դեպքում կարելի է ստանալ տարկետում, արդյո՞ք փոփոխվում է թոփ 50 բուհերի ցանկը, տարկետում ստանալուց եւ համալսարանն ավարտելուց հետո ի՞նչ պարտավորություններ ունի սովորողը, համալսարանի ֆինանսական աջակցությունը պարտադի՞ր է տարկետում ստանալու համար, ինչ՞ հետ է կապված օրենքում տեղ գտած փոփոխությունը, պե՞տք է ծառայել համալսարանն ավարտելուց հետո, տարկետման համաձայն քանի՞ տարի կարելի է մնալ արտերկրում, հնարավո՛ր է տարկետում ստանալ մի քանի անգամ, տարկետման ժամկետը կախվա՛ծ է միայն ուսումնական ծրագրի ժամկետից, ե՞րբ եւ՞նչ փաստաթղթերով է հնարավոր դիմել տարկետման համար, բացի SS ոլորտից կա՞ն ուրիշ մասնագիտություններ, որոնք կարող են նպաստել բանակաշինության զարգացմանը թիկունքում, եւ որո՞նք են դրանք, հնարավո՞ր է տարկետում ստանալ 18 տարին լրանալուց հետո, առավելագույնը քանի՞ տարի կարելի է տարեկետում վերցնել, եթե թոփ 50 ցանկում գտնվող համալսարանը տրամադրում է որոշակի աջակցություն, իսկ մնացածը տրամադրվում է այլ ֆոնդերի կողմից, արդյոք տարկետում տրամադրվո՛ւմ է եւ այլն:

Հնչեցված բոլոր հարցերին հանդիպման խոսնակները տվել են լիարժեք եւ մանրամասն պարզաբանում:

Հ. Հ.

Կրթության շահառուները եւ պատասխանատուն ամենքս ենք

սկիզբը՝ էջ 1

Ծրագիրը մշակվել է երեք ռազմավարական ուղղություններով՝ համընդհանուր ներառականություն, սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում ՀՀ ամբողջ տարածքում, կրթության արդյունավետության բարձրացում՝ ուղղված բոլոր մակարդակներում՝ ուսումնական հաստատություններից մինչեւ պետական մարմիններ կառավարման արդյունավետության ապահովման եւ ռեսուրսների արդյունավետ ու նպատակային օգտագործման: Շեշտադրված հաջորդ կարեւոր խնդիրը կրթական ծառայությունների եւ արտադրանքի միջազգայնացումն ու արտահանումն է՝ շահեկանորեն փոխակերպելով Հայաստանի դերը գլոբալ կրթական համակարգում:

«Կրթության շահառուները բոլորս ենք՝ անհատից մինչեւ պետություն, հետեւաբար նաեւ պատասխանատու ենք: Ուստի, միայն համատեղ ջանքերով կարող ենք ապահովել մեր երեխաների եւ երիտասարդների 21-րդ դարին վայել կրթությունը: Կրթությանն ուղղված ֆինանսական միջոցները ոչ թե ծախս են, այլ անհրաժեշտ ներդրում պետության եւ հասարակության զարգացման, մեր վաղվա օրվա եւ ապագայի համա»,- ընդգծել է Վահրամ Դումանյանը:

Նախարարի խոսքով՝ համալիր միջոցառումների արդյունքում շուրջ 7600 օտարերկրյա ուսանողների թիվն 2030 թ. առնվազն կկրկնապատկվի:

Մասնագիտական եւ բարձրագույն կրթական համակարգում նախատեսվում է բարձր առաջադիմություն ցուցաբերող սոցիալապես անապահով ուսանողներին պետական կրթաթոշակների տրամադրում եւ փոխհատուցում՝ բացառելով ճարունակ չլինելու պատճառով բուհից դուրս մնալու դեպքերը:

Շարունակական կրթության ապահովման տեսանկյունից առանցքային է ֆորմալ եւ ոչ ֆորմալ կրթության կրեդիտների հաշվառման եւ փոխանցման մեխանիզմների ներդրումը հանրակրթության, մասնագիտական կրթության, բարձրագույն կրթության, ինչպես նաեւ շարունակական եւ լրացուցիչ կրթության համակարգում:

Նախարարը նշել է, որ արվեստի, գեղարվեստի, երաժշտական եւ սպորտային դպրոցները, մանկապարտեզները, զարգացման կենտրոնները կունենան գործունեության միասնական չափորոշիչներ:

Քննարկման ընթացքում խոսվել է ոչ ֆորմալ կրթական ծրագրերի ռեեստրի ստեղծման մասին: Կարեւորվել է մեծահասակների կրթության հնարավորությունների շարունակական զարգացումը: Ծրագիրը նաեւ նածատեսում է, որ ընդլայնվելու են հայեցի կրթություն ստանալու աշխարհասփյուռ հայության հնարավորությունները:

Նախարարը տեղեկացրել է, որ խորհրդարանի կողմից ծրագրի հաստատումից հետո Կառավարությունը կհաստատի նաեւ ծրագրի իրականացման գործողությունների պլանը՝ սահմանելով հստակ ժամկետային թիրախներ եւ ծախսային գնահատականներ: Ընդգծվել է, որ գործողությունների ծրագրի մշակումը եւս կիրականացվի հնարավորինս մասնակցային, գործընթացում կընդգրվեն շահագրգիռ բոլոր կողմերը:

Հարցուպատասխանի ձեւաչափում, ինչպես նաեւ ելույթների ընթացքում ոլորտի մասնագետներն անդրադարձել են բուհերի մրցունակության բարձրացմանն ուղղված քայլերին ու վարկանիշավորման գործընթացին: Անդրադարձ է եղել դպրոցներում հետազոտական աշխատանքների իրականացման կարեւորությանը, նախագծային կրթության անհրաժեշտությանը, հաշմանդամություն ունեցող անձանց համար կրթության մատչելիությանն ու հասանելիությանը:

Անդրադարձ է եղել բուհերի լիցենզավորման պահանջների վերանայման նպատակահարմարությանը: Նախարարը փաստել է, որ բուհերը պետք է մրցակցեն միջազգային ասպարեզում ընդունված չափանիշներով: Միջազգային չափորոշիչներին համապատասխանելու առումով Վահրամ Դումանյանը կարծիք է հայտնել, որ պետք է բուհի շենքը կառուցելու չափանիշներն էլ փոխվեն: Խոսելով բուհերի հավատարմագրման եւ լիցենզիայի համար անհրաժեշտ պայմանների մասին՝ նա նշել է, որ այս գործընթացում հաջորդական քայլեր պետք է իրականացվեն՝ միտված ոլորտը քայլ առ քայլ բարելավելուն:

Կարեւորվել է ավագ դպրոցում եւ բուհում աշխատանքային իրավունքներին ու հարաբերությունների առանձնահատկություններին վերաբերող դասընթացների կազմակերպումը:

Նախարարը, նախարարի տեղակալներ Ժաննա Անդրեասյանը, Արթուր Մարտիրոսյանը եւ Կարեն Թռչունյանն անդրադարձել են հնչած մտահոգություններին, պատասխանել պատգամավորների եւ քննարկմանը ներկա ոլորտի մասնագետների հարցերին:

Մասնավորապես՝ ԿԳՄՍ փոխնախարար Արթուր Մարտիրոսյանը տեղեկացրել է, որ ծրագրում հաշվի են առնվել ՄԱԿ-ի կայուն զարգացման ծրագրի նպատակները, եւ ամբողջ ռազմավարության հենքը որակյալ կրթական ծառայությունների համընդհանուր հասանելիությունն է:

Անդրադարձ է եղել բուհերի խոշորացման նպատակահարմարությանը, գործընթացի թափանցիկությանը: Կարծիք է հնչել, որ խնդիրը պետք է լինի համակարգի առողջացումը, իսկ բուհերի խոշորացմամբ հարցը չի լուծվելու, ուստի որոշակի ժամանակ է պետք՝ իրավիճակը գնահատելու եւ լուծումներ գտնելու համար:

Ամփոփելով քննարկումը՝ հանձնաժողովի նախագահ **Սիսակ Գաբրիելյանը** ընդգծել է, որ քննարկման մասնակիցները կիսում են կարծիքը, որ կրթության ոլորտում առկա են խնդիրներ, որոնք համատեղ ջանքերով պետք է լուծվեն: Քննարկումները շարունակական դարձնելու պայմանավորվածություն է ձեռք բերվել:

Քննարկմանը մասնակցել են Կառավարության, հասարակական կազմակերպությունների, բուհերի ներկայացուցիչներ, կրթության ոլորտի պատասխանատուներ:

Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«Հաղթեցինք բոլորս»

սկիզբը՝ էջ 1

Ընդգծելով, որ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունն իր ուրույն տեղն է զբաղեցնում աշխարհի սպորտային քարտեզի վրա, Վահրամ Դումանյանը մաղթել է, որ տարեցտարի այդ տեղն ավելի ամրապնդվի. *«ՀՀ կառավարությունը վերջին տարիներին ջանք չի խնայում մեծ սպորտի միջոցառումների կազմակերպումը խրախուսելու համար: Այս առաջնությունն էլ դրա հերթական ապացույցն էր: Սա ոչ միայն մարզական պայքար էր, այլեւ պայքար՝ ի նպաստ պետությունների միջեւ բարի եւ գործընկերային հարաբերությունները պահելուն եւ ամրապնդելուն: Պատահական չէ, որ նմանօրինակ պայքարները միշտ ավարտվում են մշակութային ծրագրով: Շատ եմ ցանկանում, որ աշխարհում բոլոր պայքարները ծավալվեն միայն մրցահարթակում, եւ այսուհետ բացառվեն այն պայքարները, որոնք վիշտ են բերում»:*

Հիշեցնենք՝ սամբոյի աշխարհի առաջնության մրցումներում ՀՀ հավաքական թիմերը նվաճել են 20 մեդալ՝ 1 ոսկե, 2 արծաթե եւ 17 բրոնզե:

Հաղթողի տիտղոսը նվաճել եւ պատվո հարթակի առաջին աստիճանին է կանգնել 53 կգ քաշային **Ռոբերտ Սիմոնյանը:** Պատանի մարզիկն իր այս հաղթանակը նվիրել է Արցախյան պատերազմում զոհված տղաներին:

Մրցումային վերջին օրը պատվո հարթակի երրորդ աստիճանին են կանգնել 50 կգ քաշային **Արփինե Մնացականյանը,** 64 կգ քաշային **Մեսրոպ Նիկոյանը** եւ 88 կգ քաշային **Գոռ Հարությունյանը:**

Հաղթողներին եւ մյուս մրցանակակիրներին պարգեւատրել են ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը, նախարարի տեղակալ **Կարեն Գիլոյանը,** Հայաստանի սամբոյի ֆեդերացիայի նախագահ **Միքայել Հայրապետյանը:**

Հիշեցնենք՝ աշխարհի ավելի քան 20 երկրի շուրջ 500 մարզիկ եւ մարզուհի 3 օր շարունակ պայքարել են 55 հավաքածու մեդալների համար: Առաջին անգամ սամբոյի աշխարհի առաջնությունը ներառել է նաեւ երիտասարդների մարտական սամբոյի մրցամարտեր:

Հայտնի են մրցանակակիրները

սկիզբը՝ էջ 1

Ներկայացված ծրագրային առաջարկների գնահատման արդյունքում հանձնաժողովի սահմանած նվազագույն շեմը (հանրակրթական ուսհաստատությունների համար՝ սկսած 63 %–ից, նախադպրոցական ուսհաստատությունների համար՝ 59 %-ից) հաղթահարել է 22 ծրագրային առաջարկ, որից 11-ը՝ անհատական, 11-ը՝ խմբային: Այսպիսով՝ մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել 22 ծրագիր՝ 34 անձ:

Ըստ այդմ՝ *«Տարվա լավագույններ 2022»* մրցույթին սահմանված ժամկետում ներկայացվել է 185 հայտ, որոնք համապատասխանել են *«Տարվա լավագույններ»* մրցույթի կարգով սահմանված բոլոր պահանջներին:

«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում ներկայացվել է 144 հայտ, հաղթող է ճանաչվել 14 ծրագիր: Դրանք են՝

- Հային հայ պահող լեզուն ու մշակույթը Սփյուռքում՝- Երեւանի Խ. Աբովյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց, դասվար ***Հրանուշ Թորոսյան,*** *կերպարվեստի ուսուցիչ* ***Լուսինե Ղազարյան:***

- «Սոցիալական գովազդի օգտակարությունը դպրոցում»- Գյումրու թիվ 29 հիմնական դպրոց, պատմության եւ հասարակագիտության ուսուցիչ ***Կարինե Բաղիյան,*** *Գյումրու թիվ 28 հիմնական դպրոց, պատմության եւ հասարակագիտության ուսուցիչ* ***Անահիտ Առաքելյան:***

- «Էկոընտանիք» էկոկրթական ծրագիր- ՀՀ Արարատի մարզի Գեղանիստի միջնակարգ դպրոց, աշխարհագրության եւ բնագիտության ուսուցիչ ***Տիգրան Ենգիբարյան,*** *ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտի միջնակարգ դպրոց, աշխարհագրության ուսուցիչ* ***Անուշ Համբարձումյան:***

- Ծրագրավորման էլեկտրոնային դասագրքեր սկսնակների համար- ՀՀ Շիրակի մարզի «Նոր Կյանքի միջնակարգ դպրոց», ինֆորմատիկայի ուսուցիչ ***Զարուհի Պետրոսյան:***

- Գիտելիքների ստուգման էլեկտրոնային համակարգ- Ջրափիի միջնակարգ դպրոց, մաթեմատիկայի եւ ինֆորմատիկայի ուսուցիչ ***Սամսոն Գալստյան:***

- Ինտեգրված դասերի անցկացման հրամայականը եւ դրանց ներառման անհրաժեշտությունը ՆԶՊ ծրագրում- Աբովյանի Ն. Վանյանի անվան թիվ 5 հիմնական դպրոց, «ՆԶՊ եւ անվտանգ կենսագործունեություն» առարկայի ուսուցիչ ***Սամվել Սարգսյան:***

- «Զարմանահրաշ բազմանիստերե (Նախագծային աշխատանք)- Երեւանի Համբարձում Գալստյանի անվան թիվ 83 ավագ դպրոց, մաթեմատիկայի ուսուցչուհի ***Ֆլորա Կարապետյան:***

- Դպրոց դպրոցում կամ «SchoolinSchool» առցանց դպրոցի բացում- Գյումրու ակադեմիական վարժարան, պատմության ուսուցչուհի ***Անի Պողոսյան,*** *ՄԿԱ* ***Աղասի Հովհաննիսյան:***

- «Ստեղծագործող ուսուցիչն ընդառաջ կոմպետենտ քաղաքացու ձեւավորմանը»- Եղվարդի թիվ 1 ավագ դպրոց, մաթեմատիկայի ուսուցիչ ***Թամարա Սիմոնյան****, Երեւանի թիվ 118 ավագ դպրոց, ֆիզիկայի ուսուցիչ* ***Արեւիկ Պետրոսյան,*** *Զարենցավանի թիվ 2 հիմնգ դպրոց, հայոց լեզվի եւ գրական ուսուցիչ* ***Եղսան Աթանեսյան:***

- «Be Safe»- երկրաշարժի վարքականոններ բջջային հավելված-ՀՀ Արագածոտն մարզի Թալինի ավագ դպրոց, մանկավարժ ***Լալա Խուրշուդյան:***

- Ուսուցիչների հետազոտական հմտությունների զարգացում-Գյումրու Ակադեմիական վարժարան, պատմության ուսուցիչ ***Կարինե Ալեքսանյան,*** *Մուսայելյանի միջնակարգ դպրոց, պատմության ուսուցիչ* ***Մարտիրոս Գրիգորյան:***

- Ռազմական ակումբ-Ալավերդու Մ.Թանդիլյանի թիվ 10 հիմնական դպրոց, զինղեկ ***Արմինե Փափազյան:***

- Ռոբոտաշինությունը տանը եւ դպրոցում-Երեւանի Գ. Չաուշի անվան հգ 188 հիմն. դպրոց, ինֆորմատիկայի ուսուցիչ ***Գայանե Վելիջանյան,*** *Երեւանի Մ. Ջանբազյանի անվան հ. 79 հիմնգ դպրոց, ինֆորմատիկայի ուսուցիչ* ***Հասմիկ Այվազյան:***

- Կենդանի պատմություն-ՀՀ Շիրակի մարզի Գյումրու թիվ 15 հիմնական դպրոց, հայոց եւ համաշխարհային պատմության ուսուցիչ ***Լաուրա Գրքիկյան:***

«Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում ներկայացվել է 14 հայտ, հաղթող է ճանաչվել 3 ծրագիր: Դրանք են՝

«Դպրոցի արտաբյուջեի ստեղծումը եւ նպատակային օգտագործումը»- Արմավիրի մարզի Բերքաշատի միջնակարգ դպրոց, տնօրեն ***Հասմիկ Շահբազյան:***

«Ես բնագետ եմ»- Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց, տնօրեն ***Կարինե Հովակիմյան,*** *Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ դպրոց, փոխտնօրեն* ***Արեւիկ Պետրոսյան:***

«Այլընտրանքային դասալսումներ»- ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Մ. Թանդիլյանի անվան N 10 հիմնական դպրոց, տնօրեն ***Վեներա Աբովյան:***

«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ գործունեության լավագույն ծրագիր» անվանակարգում ներկայացվել է 14 հայտ, հաղթող է ճանաչվել 2 ծրագիր: Դրանք են՝

- Աշխարհագրությունը կյանք է...- ՀՀ Արարատի մարզի Գեղանիստի միջնակարգ դպրոց, աշխարհագրության եւ բնագիտության ուսուցիչ ***Տիգրան Ենգիբարյան,*** *ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտի միջնակարգ դպրոցի տնօրեն, աշխարհագրության ուսուցիչ* ***Անուշ Համբարձումյան:***

- «Աշխարհը մեր ճամպրուկում»- Ալավերդու Մ. Թանդիլյանի անվան թիվ 10 հիմնական դպրոցի հոգեբան ***Նարինե Մուրադյան:***

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում ներկայացվել է 8 հայտ, հաղթող է ճանաչվել 2 ծրագիր: Դրանք են՝

- Անվտանգ վարքագծի դրսեւորումը խաղային տեխնոլոգիաների միջոցով. «Ճանաչի՛ր վտանգը, եղիր պաշտպանված»- Հրազդանի թիվ 13 մանկապարտեզ, տնօրեն ***Շուշանիկ Զոհրաբյան,*** *ֆիզ. Հրահանգիչ* ***Մարգո Սիմոնյան,*** *դաստիարակ* ***Սաթենիկ Մանուկյան:***

- Ավագ տարիքային խմբի երեխաների զարգացման եւ կրթական վերջնարդյունքների համատեքստում երեխաների ճանաչողական եւ մոտիվացիոն կարողությունների իրացման ծրագիր՝ որպես տարվերջյան ավարտական տոնահանդես-ցերեկույթի բաղադրիչ- «Միտոյան» մանկական եւ ուսումնախորհրդատվական կենտրոն, տնօրենի խորհրդական ***Նունե Առաքելյան,*** *երաժշտ. դաստ.* ***Մարգարիտա Արսենյան,*** *դաստիարակ* ***Արմինե Գասպարյան:***

«Նախադպրոցական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում ներկայացվել է 4 հայտ: Այս անվանակարգում ոչ մի ծրագիր հաղթող չի ճանաչվել:

«Նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ գործունեության լավագույն ծրագիր» անվանակարգում ներկայացվել է 1 հայտ, հաղթող է ճանաչվել 1 ծրագիր: Այն է՝ *«Նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատանքները կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողների հետ»- «Զունիոր Քլաբ»* մանկական կենտրոն (ՆՈՒՀ), մեթոդիստ **Տաթեւիկ Վաթյան:**

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մարզական

«Շատ երկար եմ սպասել ոսկե մեդալին»

Բռնցքամարտի Հայաստանի կանանց հավաքականը 1 ոսկե եւ 2 բրոնզե մեդալ է նվաճել Չեռնոգորիայի Բուդվա քաղաքում անցկացված բռնցքամարտի Եվրոպայի մեծահասակների առաջնությունում:

Եվրոպայի չեմպիոնի կոչմանն արժանացել է **Անի Հովսեփյանը:** 70 կգ քաշայինների եզրափակչում հայ մարզուհին 4:1 հաշվով առավելության է հասել Իռլանդիայի ներկայացուցիչ Քրիստինա Դեսմոնդի նկատմամբ եւ արժանացել չեմպիոնի կոչմանը: Անի Հովսեփյանն առաջնության քառորդ եզրափակչում ավելի վաղ հաղթանակ էր տարել հունգարացի Ռեգինա Լակոսի նկատմամբ, իսկ կիսաեզրափակչում 5:0 հաշվով առավելության էր հասել Չեռնոգորիայի ներկայացուցիչ Թամարա Ռադուլովիչի նկատմամբ:

Մեկնաբանելով չեմպիոնությունը՝ Անին նշել է, որ շատ երկար էր սպասել այս մեդալին. *«Իռլանդացի բռնցքամարտիկը բավականին բարդ մրցակից էր, բայց ռինգում հաղթելու ու պայքարելու իմ ցանկությունն ավելի մեծ էր, որովհետեւ ես շատ երկար էի սպասել այս պահին ու այս մեդալին: Եվրոպայի առաջնությունն արդեն պատմություն է: Պետք է էլ ավելի լավ պատրաստվել ու զարգացնել այն հաջողությունը, որը ես ունեմ հիմա: Իմ ծրագրերն ու նպատակները կապված են Փարիզի 2024 թվականի Օլիմպիական խաղերի հետ: Հուսով եմ, որ կլինեմ օլիմպիական հավաքականում»:*

Ի դեպ, Անի Հովսեփյանն առաջնության ընթացքում նաեւ ընտրվել է EUBC-ի (Սիրողական բռնցքամարտի եվրոպական ֆեդերացիա) գործկոմի անդամ: Ընտրությունը կատարվել է բռնցքամարտիկների կողմից: Գործկոմում են նաեւ մեկական կին եւ տղամարդ բռնցքամարտիկներ: Նրանք գործկոմում կքարձրացնեն բռնցքամարտիկներին վերաբերող հարցեր:

Հայաստանի կանանց հավաքականի կազմում բրոնզե մեդալներ էլ նվաճել են 54 կգ քաշային **Եկատերինա Սիչեւան** եւ 63 կգ քաշային **Սոնա Հարությունյանը՝** կանգնելով պատվո հարթակի երրորդ աստիճանին:

Նշենք՝ հայ բռնցքամարտիկները պատմության մեջ առաջին անգամ են մեդալներ նվաճում բռնցքամարտի Եվրոպայի կանանց մեծահասակների առաջնությունում:

Մարզիչ **Ռաֆայել Մեհրաբյանի** գլխավորությամբ Հայաստանի կանանց հավաքականը Եվրոպայի առաջնությանը մասնակցել է 7 մարզիկով: Թիմի կազմում ընդգրկված են եղել նաեւ **Տաթեւիկ Խաչատրյանը** (57 կգ), **Էլիդա Քոչարյանը** (60 կգ), **Գայանե Տեր-Բարսեղյանը** (48 կգ) եւ **Անուշ Գրիգորյանը** (50 կգ), որոնք, սակայն, անմասն են մնացել մեդալներից:

Տոնել են Պարենի համաշխարհային օրը

«Դպրոցական սնունդ» ծրագրի գործընկերները՝ Հայաստանում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը (ՊՀԾ), Ռուսաստանի Դաշնության Ճյուղային սննդի ինստիտուտը (SIFI) եւ ԿԶՆԱԿ հիմնադրամի *«Դպրոցական սնունդ եւ երեխաների բարեկեցություն»* հիմնարկը, Արմավիր մարզի Մեծամորի թիվ 1 հիմնական դպրոցի տարրական դասարանների 93 աշակերտների հետ հավաքվել էին՝ նշելու Պարենի համաշխարհային օրը:

Պարենի համաշխարհային օրվա հիմնական նպատակն է բարձրացնել բնակչության իրազեկվածությունն աշխարհում առկա պարենային խնդրի վերաբերյալ: Այն եւս մեկ առիթ է՝ անդրադառնալու, թե ինչ է արվում համամարդկային խնդրից՝ սովից, թերսնումից եւ աղքատությունից ազատվելու համար: Այս տարվա միջոցառման հիմնական նպատակն ուղղված է շրջակա միջավայրի, սնուցման ու պարենի արտադրության բարելավմանը, ինչպես նաեւ ագրոպարենային համակարգերի վերափոխմանն ու հետագա զարգացմանը:

Ամեն տարի ՀՀ դպրոցների տարրական դասարանների աշակերտները մասնակցում են առողջ սննդի հետ կապված թեմատիկ միջոցառումների, որոնք կազմակերպում են *«Դպրոցական սնունդ»* ծրագրի գործընկերները:

Պարենի համաշխարհային օրը մեծամորցի դպրոցականները տոնել են՝ մասնակցելով ինտերակտիվ թատերական ներկայացմանը, քվեստ խաղին եւ վարպետության դասի՝ ձեռք բերելով առողջ սնունդ ընտրելու հմտություններ, բույսերի աճի վերաբերյալ գիտելիքներ, ինչպես նաեւ տեղեկանալով, թե ինչպես իրենց ամենօրյա ընտրությունն ու քայլերը կարող են օգնել ավելի բարեկեցիկ ու կայուն ապագա կառուցել բոլորի համար: Ներկայացման ընթացքում երեխաները հանդիպել են *«Խոհանոցավանի պատմությունները»՝* առողջ սննդի հեքիաթային քաղաքի հերոսներին, ապա վերջիններիս հետ մասնակցել քվեստ խաղին, որի ընթացքում մասնակիցները ծանոթացել են բույսեր աճեցնելու հիմնական կանոններին:

Խաղից հետո վարպետության դասի մասնակիցները ձեռք են բերել միկրոկանաչիներ աճեցնելու գործնական հմտություններ:

Աշխարհի հետ

Համագործակցության լավագույն մոդելներ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանն** ընդունել է ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան **Անն Լույոյին:** Հանդիպմանը ներկա է եղել նաեւ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը:**

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների միջեւ կրթության եւ մշակույթի ոլորտում հարաբերությունների առավել ամրապնդմանը, ինչպես նաեւ բազմաշերտ համագործակցության օրակարգի ընդլայնմանն ու հարստացմանը վերաբերող մի շարք հարցեր:

Ողջունելով ներկաներին՝ նախարար Վահրամ Դումանյանը նշել է, որ ԿԳՄՍ նախարարությունը հավատարիմ է ֆրանկոֆոնիայի շրջանակում իր ստանձնած հանձնառությանը եւ պատրաստ է ակտիվացնել այդ ուղղությամբ համագործակցությունը:

Դեսպան Անն Լույոն ներկայացրել է ֆրանսիական կողմի պատրաստակամությունը՝ աջակցելու ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում ֆրանսերենի ուսուցման խորացմանը եւ ծրագրի ընդլայնմանը, որը կնպաստի դպրոցներում ֆրանսերենի դասավանդման արդյունավետության բարձրացմանը: Որպես հաջողված մոդել՝ դեսպանը նշել է Երեւանի թիվ 119 ավագ դպրոցի օրինակը՝ ընդգծելով, որ այդ դպրոցի աշակերտների հետ նրան հաջողվել է ազատ շփվել ֆրանսերենով: Այդ նպատակով նա առաջարկել է նմանատիպ ծրագրեր իրականացնել եւ ֆրանսերենի ուսուցման մակարդակը բարձրացնել նաեւ ՀՀ մարզերում, մասնավորապես՝ Գյումրիում: Դեսպանը մատնանշել է նաեւ նմանատիպ ծրագրի իրականացումը Կապան քաղաքում՝ ընդգծելով Սյունիքի մարզի եւ ֆրանսիական Լիոնի միջեւ համագործակցության հնարավորությունը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ կրթության ոլորտում համագործակցության ընդլայնմանն ուղղված մի շարք այլ հարցեր, մասնավորապես՝ Հայաստանում ֆրանսիական համալսարանի գործունեության համար առավել նպաստավոր պայմանների ստեղծումը: Վահրամ Դումանյանը բարձր է գնահատել Հայաստանում ֆրանսիական համալսարանի գործունեությունը եւ փաստել, որ այն լավագույնս նպաստում է հայ-ֆրանսիական բարեկամության զարգացմանը եւ նոր հնարավորությունների ստեղծմանը: Երկուստեք կարեւորվել է մեր երկրում այդ համալսարանի գործունեության զարգացումը:

Կողմերն անդրադարձել են նաեւ Հայաստանում ֆրանսիական ինստիտուտի գործունեությանը՝ ընդգծելով, որ այն նոր որակ կհաղորդի կրթության եւ մշակույթի ոլորտներում Ֆրանսիայի եւ Հայաստանի միջեւ համագործակցությանը: Ֆրանսիական կողմը պատրաստակամություն է հայտնել Հայաստան գործուղել երիտասարդ դասավանդողների՝ ֆրանսերենի ուսուցիչներին աջակցելու նպատակով: Դեսպանի խոսքով՝ այդ գործընթացին կաջակցի Հայաստանում ֆրանսիական ինստիտուտը: Նա նաեւ հավելել է, որ ինստիտուտը կիրականացնի ֆրանսերենի ուսուցման եւ լեզվի քննության գործընթաց՝ ոչ ֆորմալ կրթության ֆորմատով:

Հանդիպմանը քննարկվել է նաեւ *«Հայաստան. ժառանգության ուսուցում, պահպանում եւ արժեւորում»* ծրագիրը, որը նշանավորում է Ֆրանսիայի հանձնառությունը՝ աջակցելու Հայաստանի մշակութային ժառանգության պահպանությանը, վերականգնմանը եւ արժեւորմանը: Նշվել է, որ ծրագիրը ներառում է երեք բաղադրիչ. առաջին ուղղությունը նվիրված է կրթությանը եւ վերապատրաստմանը, իսկ երկրորդ ճյուղը՝ Տաթեւի Մեծ անապատ վանքային համալիրի վերականգնմանը: Երկու բաղադրիչում էլ ներգրավված է ժառանգության ազգային ինստիտուտը: Երրորդ ուղղությունը վերաբերում է *«Էրեբունի»* թանգարանի մշտական ցուցադրության նոր հայեցակարգին: Նշվել է, որ այս ծրագիրը կարող է որպես մոդել ծառայել նաեւ այլ ուղղություններով համագործակցության համար:

Հարաբերությունների զարգացման նպատակով

ՀՀ ԿԳՄՍի նախարար **Վահրամ Դումանյանն** այսօր ընդունել է ՀՀ-ում Լեհաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան **Պավել Չեպլակի** գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա է եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը:**

Նախարար Վահրամ Դումանյանը ողջունել է դեսպան Չեպլակին եւ համոզմունք հայտնել, որ նա իր դիվանագիտական գործունեությամբ կնպաստի հայ-լեհական հարաբերությունների շարունակական զարգացմանն ու փոխշահավետ համագործակցության ընդլայնմանը:

«Լեհաստանի հետ բարեկամական լավ հարաբերություններ ունենք եւ շատ ենք կարեւորում մեր համագործակցությունը տարբեր ուղղություններով»,- ասել է Վահրամ Դումանյանը՝ մասնավորապես շեշտելով *«Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Լեհաստանի Հանրապետության կառավարության միջեւ մշակույթի, գիտության, կրթության եւ սպորտի բնագավառներում 2022-2026 թվականների»* համագործակցության ծրագրի մշակումը, որի նախագիծն ամփոփիչ փուլում է:

Ծրագիրը ներառում է նաեւ համալսարանական կրթաթոշակային ծրագիր իրականացնելու հնարավորությունը, ինչը կողմերը հատուկ կարեւորել են՝ ընդգծելով, որ ուսանողների փոխանակումը կրթական համագործակցության եւ միջմշակութային երկխոսության լավագույն դրսեւորումներից է:

Դեսպան Պավել Չեպլակը շնորհակալություն է հայտնել հյուրընկալության համար՝ նշելով, որ լեհական կողմը եւս հետաքրքրված է երկու երկրների միջեւ մշակույթի, գիտության, կրթության եւ սպորտի բնագավառներում 2022-2026 թվականների գործնական ծրագրի իրագործմամբ՝ հույս հայտնելով, որ համագործակցության պայմանագիրը կստորագրվի ամենասեղմ ժամկետում:

Հանդիպման ընթացքում ԿԳՄՍ նախարարի առաջարկով քննարկվել է ՀՀ Գիտության կոմիտեի եւ Լեհաստանի գիտության եւ բարձրագույն կրթության նախարարության համակարգում գործող Գիտության ազգային կենտրոնի հետ համագործակցային կապերի հաստատման, Լեհաստանի եւ Հայաստանի բարձրագույն կրթության կառավարման ոլորտի մասնագետների փորձի փոխանակման հնարավորությունները: Քննարկվել

է նաեւ Վարշավայի համալսարանում հայագիտական կենտրոն ստեղծելու առաջարկը, որը միջբուհական համագործակցության զարգացման նոր խթան կհանդիսանա:

Անդրադառնալով մշակութային համագործակցության հեռանկարներին՝ կողմերը քննարկել են 2023 թվականին Լեհաստանում հայ մշակույթի օրերի անցկացման հնարավորությունը եւ դրա շրջանակում ժամանակակից արվեստի ցուցահանդես եւ տարազների ցուցահանդես կազմակերպելու հարցը: Հաշվի առնելով, որ 2023 թվականին լրանում է հայ կինոյի 100-ամյակը, նախարար Վահրամ Դումանյանը լեհ գործընկերոջն առաջարկել է Լեհաստանի մշակույթի նախարարությանը ներկայացնել Վարշավայում եւ Կրակովում հայկական կինոյի շաբաթ կազմակերպելու առաջարկը:

Դեսպան Պավել Չեպլակը բարձր է գնահատել հայկական կողմի առաջարկությունները՝ պատրաստակամություն հայտնելով հետամուտ լինել դրանց իրականացմանը:

Ամուր եւ շարունակական կապեր

ՀՀ ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանն** ընդունել է ՀՀ-ում Արգենտինայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան **Մարիանո Վերգարային:** Հանդիպմանը ներկա է եղել նաեւ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը:**

«Ուրախ ենք ձեզ ողջունելու Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունում: Հույս ունեմ, որ այս հանդիպումը կնպաստի Հայաստանի ու Արգենտինայի միջեւ նախատեսվող մշակութային մի շարք ծրագրերի իրականացմանը՝ արդյունավետ փոխգործակցության լայն հնարավորություն ստեղծելով նաեւ այլ ոլորտների համար: Մենք պատրաստ ենք համագործակցություն ծավալել նախարարության ենթակայության բոլոր բնագավառներում, իսկ արգենտինահայ համայնքը կարող է կամուրջ հանդիսանալ երկկողմ հարաբերությունների զարգացման գործում»,- ասել է Վահրամ Դումանյանը եւ հույս հայտնել, որ դեսպանի դիվանագիտական գործունեությունը կնպաստի երկկողմ կապերի ամրապնդմանը եւ հայ-արգենտինական փոխհամագործակցության շարունակական խորացմանն ու ընդլայնմանը:

ՀՀ-ում Արգենտինայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Մարիանո Վերգարան շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ ընդգծել, որ հենց Արգենտինայի հայ համայնքն է նպաստել Հայաստանում Արգենտինայի դեսպանություն հիմնելուն, ինչպես նաեւ առկա ծրագրերի եւ նոր նախաձեռնությունների իրականացմանը: *«Հայաստանի եւ Արգենտինայի միջեւ ամուր, շարունակական եւ անընդհատ զարգացող կապ կա: Դեսպանության համար մշակութային ծրագրերն առաջնահերթ նշանակություն ունեն, ուստի ակնկալում ենք նախարարության աջակցությունն առաջիկայում կազմակերպվելիք միջոցառումների անցկացման համար»,*- ասել է Մարիանո Վերգարան:

ԿԳՄՍ նախարարը նախատեսված ծրագրերի իրականացմանն աջակցելու պատրաստակամություն է հայտնել եւ առաջարկել արգենտինական մշակույթի օրեր անցկացնել Հայաստանում, համապատասխանաբար՝ Արգենտինայում էլ կազմակերպել հայկական մշակույթին վերաբերող միջոցառումներ:

Հանդիպման ընթացքում Վահրամ Դումանյանը կարեւորել է Արգենտինայի Քենեդու անվան համալսարանում հայերենի եւ հայագիտական առարկաների դասավանդման ծրագրի իրականացումը:

ՄԿՈՒ ոլորտ

Շարունակականությունը եւ կայունությունը՝ հիմնական սկզբունքներ

Ստորեւ ներկայացնում ենք մեր թղթակցի հարցազրույցը՝ ԳՄՀԸ (GIZ) *«Մասնավոր հատվածի զարգացում եւ մասնագիտական կրթություն եւ ուսուցում Հարավային Կովկասում»* ծրագրի հայաստանյան թիմի ղեկավար **Արամ ԲԱԲԱՅԱՆԻ** հետ:

- Հարգելի՛ պարոն Բաբայան, գաղտնիք չէ, որ հանրային ընկալումներում մշտապես առաջնային են եղել հանրակրթությունը եւ բարձրագույն կրթությունը. դրանով է բացատրվում նաեւ միջազգային կազմակերպությունների ներգրավվածությունն այդ ոլորտներում: GIZ-ը 2017 թվականից թիրախային է դիտարկել ՄԿՈՒ ոլորտը եւ հետեւողական իրականացնում է ծրագրեր, որոնց հաջողության հասնելը երբեմն անհավանական էր թվում: Ինչպե՞ս կմեկնաբանեք կազմակերպության այդ հաստատակամությունը:

- Իրականում, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը, գործելով Գերմանիայի կառավարության անունից, ՄԿՈՒ ոլորտին սկսել է աջակցել ավելի վաղ՝ տարբեր զարգացման ծրագրերի շրջանակում: *«Մասնավոր հատվածի զարգացում եւ մասնագիտական կրթություն եւ ուսուցում Հարավային Կովկասում»* ծրագրի շրջանակում մենք 2017 թվականից սկսել ենք դուալ համակարգի փորձարկումը Հայաստանի ՄԿՈՒ հաստատություններում՝ հանրային, պետական եւ մասնավոր գործընկերների հետ համագործակցությամբ: Աշխատաշուկայի հետ կապի ապահովումը մշտապես եղել է մասնագիտական կրթության կազմակերպման կարեւոր ուղենիշը: Կրթություն-աշխատաշուկա փոխազդեցությունների մակարդակով է պայմանավորված երկրի ինչպես տնտեսության, այնպես էլ մարդկային կապիտալի զարգացումն ու հեռանկարը: Այդ իսկ պատճառով Գերմանիայի կառավարությունը մեծ ուշադրություն է հատկացնում հենց միջին մասնագիտական ոլորտին եւ փորձում ուժեղացնել այն աշխարհի տարբեր երկրներում:

- Կոնկրետ ի՞նչ ծրագրեր է իրականացվում GIZ-ը ՄԿՈՒ ոլորտում, եւ կա՞ն արդեն ավարտված կամ ավարտվելու գործընթացում ծրագրեր:

- Մեր ջանքերն ուղղված են դուալ կրթության ներդրմանն ու արդյունավետ իրականացմանը Հայաստանի ՄԿՈՒ համակարգում: Նշեմ մի քանի կարեւոր փաստ եւ թիվ՝ մեր աջակցությամբ ԿԳՄՍՆ-ի հետ համատեղ գործարկել ենք 12 երկարաժամկետ դուալ դասընթաց 10 ՄԿՈՒ հաստատություններում՝ գիտեգործության, զբոսաշրջության եւ ՏՏ/ճշգրիտ ճարտարագիտության ոլորտներում ընտրված մասնագիտացումների համար: Երկարաժամկետ ծրագրերից բացի՝ մենք աջակցել ենք 4 ՄԿՈՒ քոլեջներում 3 դուալ կարճաժամկետ դասընթացների փորձնական ներդրմանը՝ բավարարելով մասնավոր հատվածի ընկերությունների կարիքները: Այս կարճաժամկետ դասընթացները (4-5 ամիս տեւողությամբ) հիմնականում միտված են նոր մասնագիտությունների ստեղծմանը: Բացի այդ, ՄՀՋ ՄԿՈՒ-ի աջակցությամբ 2018-ին կազմակերպվել եւ անցկացվել է *«Հմտություններ բիզնեսի համար, բիզնես՝ հմտությունների համար»* մասնագիտական կրթության եւ ուսուցման միջազգային համաժողովը: Այն շուրջ 200 բանախոս, հաղորդավար եւ մասնակից է հյուրընկալել Եվրոպայից, Ռուսաստանից եւ ԱՊՀ երկրներից: Համաժողովի արդյունքում Հայաստանում ՄԿՈՒ ոլորտի զարգացման վերաբերյալ առաջարկներ են մշակվել եւ կյանքի կոչվել:

- Խնդրում եմ ներկայացնել Maveta ծրագրի մանրամասները եւ դրա շրջանակում GIZ-ի եւ գործընկերների համագործակցությունը:

- *«Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության եւ ուսուցման արդիականացում»՝* MAVETA, ծրագիրը մեկնարկել է այս տարվա սեպտեմբերին: Ծրագիրն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) եւ *«Շվեյցարիայի եկեղեցու օգնություն»* (HEKS/EPER) կազմակերպության կողմից՝ *«Ռազմավարական զարգացման գործակալություն»* (ՌԶԳ) ՀԿ-ի եւ Կիրառական գիտությունների Բեռնի համալսարանի գյուղատնտեսության, անտառային ու պարենային գիտությունների դպրոցի (HAFL) ներգրավվածությամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է ԳԴՀ տնտեսական համագործակցության եւ զարգացման նախարարության (BMZ) եւ Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության (SDC), ինչպես նաեւ Հայաստանի կառավարության եւ մի շարք այլ միջազգային կազմակերպությունների կողմից: 2022-2024 թթ. ընթացքում GIZ-ն իրականացնելու է ծրագրի բաղադրիչներից մեկը՝ հիմնականում շեշտադրումը կատարելով մասնագիտական կրթության եւ ուսուցման օրենքում փոփոխությունների եւ բարեփոխումների վրա, ինչպես նաեւ նոր մասնագիտություններում՝ գյուղատնտեսության ոլորտում, դուալ համակարգի ներդրման շրջանակում: Մեր՝ GIZ-ի նպատակն է՝ ընդլայնել դուալ կրթության աշխարհագրությունը ծրագրի միջոցով՝ ներառելով նոր քոլեջներ եւ ընդլայնելով մասնավոր ընկերությունների աշխարհագրությունը՝ այդպիսով հնարավորություն տալով ավելի մեծ թվով ընկերությունների մասնակցել դուալ կրթական համակարգին:

- Աշխատաշուկայի եւ կրթության համագործակցության զարգացման համար բավարար չեն միայն ուսումնական հաստատությունների հետ տարվող աշխատանքները: Խնդրում եմ ներկայացնել նաեւ այն ծրագրերը, որոնք այդ համատեքստում իրականացնում եք Հայաստանի գործարար շրջանակների համար:

- Բիզնեսի տեսանկյունից՝ մասնավոր հատվածը կորցրել է ՄԿՈՒ-ի հետ իր կապը: Կրթական համակարգը դիտարկվել է՝ որպես զուգահեռ զարգացող կառուցվածք: Այս համատեքստում անհրաժեշտ է մոտեցնել ՄԿՈՒ-ն եւ տնտեսությունը, ինչպես նաեւ համագործակցության նոր եղանակներ մշակել: Այս ֆոնին ՀՀ կառավարությունը 2008 թվականին ընդունել է *«ՄԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերության հայեցակարգը հաստատելու մասին»* ենթաօրենսդրական ակտը, որը սահմանում է միջին մասնագիտական կրթության մեջ մասնավոր հատվածի ներգրավման իրավական շրջանակը: Միջոցառման նպատակն էր գնահատել ՄԿՈՒ ոլորտի բոլոր գործողությունները, մասնավորապես՝ բիզնեսի ներկայացուցիչների ներգրավումը ոլորտային քաղաքականության, ծրագրերի եւ կրթական ստանդարտների մշակման գործում, ինչպես նաեւ ՄԿՈՒ քոլեջների կառավարման գործընթացում: Մեր ծրագրի անունն ինքնին ենթադրում է ակտիվ համագործակցություն մասնավոր հատվածի հետ: Կապը գործարար համայնքի հետ մեր աշխատանքի կարեւորագույն տարրերից է: Փորձում ենք գործընթացին ներգրավել նաեւ գործարար համայնքը ներկայացնող եւ համակարգող ասոցիացիաներին եւ միություններին: Մասնավոր հատվածը սերտորեն համագործակցում է եւ ընդգրկված է ծրագրի իրականացման բոլոր փուլերում՝ ուսումնական ծրագրերի մշակումից սկսած մինչ բուն դուալ ուսուցման կազմակերպումը: Ծրագրի ամենակարեւոր ավելացված արժեքն աջակցությունն է միաժամանակ եւ՝ մասնավոր հատվածին, եւ՝ կրթությանը: Այդպիսով՝ մենք այս երկու կարեւոր ոլորտները բերում ենք համագործակցության դաշտ: Միայն զարգացող ոլորտներն ու ընկերություններն են ստեղծում աշխատատեղեր, որակյալ մասնագետներ: Այդ իսկ պատճառով դուալ կրթության ներդրումը ինքնապատակ չէ եւ ոչ բոլոր ոլորտների եւ մասնագիտությունների համար է իրատեսական, քանի որ իրականացման համար պետք է մասնավոր ընկերությունների կրիտիկական զանգված եւ զարգացող ոլորտ:

- Տարիների փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ լավագույն արդյունքներն արագ փոշիանում են ծրագրերի ավարտից հետո: Ի՞նչ մոտեցում ունի ծրագրերի շարունակականության ապահովման հարցում GIZ-ը, եւ արդյոք ոլորտային նոր օրենքի նախաձեռնությունը, որին ակտիվ մասնակցում է GIZ-ը, այս կարեւոր հիմնախնդիրը կլուծի:

- Շարունակականությունը եւ կայունությունը մեր ծրագրերի հիմնական սկզբունքներից են: Ի ուրախություն մեզ՝ մենք ունենք վստահելի գործընկերներ բոլոր ոլորտներումգ կրթության ոլորտում դա ԿԳՄՍ նախարարությունը եւ ՄԿՈՒԶԱԿ-ն են, որոնք ոչ միայն աջակցություն են ստանում, այլ նաեւ ապահովում են ծրագրի արդյունքների շարունակականությունը: ՄԿՈՒ օրենքի բարեփոխմամբ մենք ակնկալում ենք հասնել ավելի երկարաժամկետ արդյունքների: Այն դեռ քննարկման փուլում է, եւ ԿԳՄՍՆ-ին կհանձնվի նոյեմբերին: Վստահ ենք, որ միացյալ ուժերով կարող ենք հասնել կայուն եւ երկարաժամկետ արդյունքների: Մեր ծրագրի իրականացման ընթացքում հատուկ ուշադրություն ենք դարձնում գործընկերների կարողությունների ուժեղացմանը, որպեսզի ծրագրի ավարտից հետո նրանք կարողանան կատարել այն աշխատանքը, որը մենք սկսում ենք միասին: Բացի դրանից, եթե կայունության ապահովումը ենթադրում է ինստիտուցիոնալ բարեփոխումներ, մենք դա քննարկում ենք եւ իրականացնում նաեւ համապատասխան փոփոխությունները:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Գուպար» ազգային ավանդական խաղերի մրցույթը Արցախում

Օրերս Ասկերանի շրջանի Աստղաշեն համայնքում տեղի է ունեցել *«Գուպար»* ազգային ավանդական խաղերի մրցույթը, որին մասնակցել են Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Հադրութի, Քաշաթաղի, Շուշիի եւ Շահումյանի շրջանները ներկայացնող 7 թիմեր՝ տարբեր տարիքի շուրջ 60 պատանիներ ու երիտասարդներ:

Կազմակերպվել են 4 ազգային ավանդական խաղեր (Լախտի, Աքլորակռիվ, Քաշոցի, Պարանի ձգում): Արդյունքում՝ առաջին տեղը զբաղեցրել է Ասկերանի թիմը, երկրորդը՝ Քաշաթաղի թիմը, իսկ երրորդը՝ Հադրութի թիմը, որոնք արժանացել են դրամական պարգեւների:

Միջոցառմանը ներկա են եղել նաեւ Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարար **Անահիտ Հակոբյանը,** նախարարի տեղակալ **Լեոնիկ Հովհաննիսյանը,** շրջանային վարչակազմերի ղեկավարներ, մշակույթի ոլորտի պատասխանատուներ:

Ծրագրի նպատակն է նպաստել հասարակության տարբեր շերտերի՝ ազգային արժեքների շուրջ համախմբմանը, երիտասարդության շրջանում ազգային խաղերի տարածմանն ու զարգացմանը:

«Գուպար» ազգային ավանդական խաղերի մրցույթի ծրագիրն իրականացվում է *«Դիզակ Արտ»* մշակութային հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ եւ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Տարեդարձի առթիվ

Օրենքով գրականագետի արժանավոր հոբելյանը

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Դավիթ Գասպարյանը** ժամանակակից հայ գրականագիտության առաջատար անուններից է: Ստեղծել է մեծ վաստակ՝ շուրջ յոթ տասնյակի հասնող գրքեր՝ գրականության պատմություններ, մենագրություններ, ժողովածուներ, դասագրքեր, ձեռնարկներ եւ այլն: Նրա հրատարակած գրականագիտական, քննադատական, հրապարակագրական հոդվածների թիվն անցնում 1300-ի սահմանը: Սա ծանրակշիռ վաստակ է, որ հիմնարար նշանակություն ունի հայ գրականագիտության, գրական քննադատության, բարձրագույն եւ հանրակրթական դպրոցների դասագրքաստեղծման գործում:

Դավիթ Գասպարյանի գիտահետազոտական գործունեությունը 1970-ական թթ. սկզբից ծավալվել է գրականագիտության բոլոր ասպարեզներում՝ գրականության պատմություն, գրական քննադատություն, գրականության տեսություն, գրական կապեր, բնագրագիտություն, մատենագիտություն… Դրան էլ պետք է ավելացնել հրապարակագրությունը, դասագրքաստեղծումն ու մեթոդիկան:

Որպես գրականության պատմաբան՝ զբաղվել է նախ՝ նորագույն շրջանի, այնուհետեւ՝ հայ հին եւ միջնադարյան գրականության պատմությամբ: Մեծ է նրա ներդրումը՝ հատկապես 20-րդ դարի հայ գրականության պատմության ուսումնասիրության գործում: Այս տեսակետից հիշարժան են նրա *«Եղիշե Չարենցը եւ 1920-ական թվականների սովետահայ պոեզիան»* (1983), *«Հայ սովետական պոեզիայի պատմություն»* (հեղինակակցությամբ, 1987), *«Պոեզիան եւ կյանքի ճշմարտությունը»* (1990) գրքերը:

Լայն է նրա գործունեության շառավիղը՝ հատկապես Չարենցի ժառանգության ուսումնասիրության ասպարեզում: Միայն Չարենցի կյանքի եւ գործի հետազոտությանը նվիրել է մեկ տասնյակից ավելի աշխատություն՝ *«Եղիշե Չարենցը եւ 1920-ական թվականների սովետահայ պոեզիան»* (1983), *«Ողբերգական Չարենցը»* (1990), *«Եղիշե Չարենց: Հայոց բանաստեղծության մայրաքաղաքը»* (1996), *«Չարենցյան ասույթներ»* (Բեյրութ, 1997) եւ փաստագրական մի ողբերգություն՝ *«Եղիշե Չարենցի հավատաքննությունը կամ Բանաստեղծի վերջին աղոթքը»* (2003): Տպագրության է պատրաստել Չարենցի անտիպ ժառանգության գիտաքննական երկու ժողովածու՝ *«Նորահայտ էջեր»* (1996), *«Գիրք մնացորդաց»* (2012, 2017), հուշերի երկու գիրք (1997, 2008), երկերի քառահատոր ժողովածու (2012- 2015):

Ակնառու է նրա վաստակը նաեւ Ակսել Բակունցի, Գուրգեն Մահարու կյանքի եւ ստեղծագործության անհայտ էջերի լուսաբանան ասպարեզում, որն արտահայտվել է ծավալուն մենագրություններով եւ բազմաթիվ հոդվածներով:

Նորագույն շրջանի հայ գրականության պատմության ուսումնասիրությանն են նվիրված նրա *«Հայ գրականություն»* մատենաշարի վեց հատորները (2000-2017), նաեւ առանձին հեղինակների նվիրված մենագրություններ՝ *«Պարույր Սեւակ»* (2000), *«Համո Սահյան»* (2003), *«Վահագն Դավթյան»* (2007): Ընթացքի մեջ է *«XXI դար: Հայ գրողներ»* մատնաշարը, որի երկու գիրք լույս է տեսել՝ նվիրված Խաչիկ Մանուկյանին եւ Սոնա Վանին:

2009-ին լույս տեսավ նրա *«Հայ հին եւ միջնադարյան գրականության պատմություն»* հիմնարար աշխատությունը, որը համակարգված ձեւով ներկայացնում է 5-18-րդ դարերի հայ գրականության զարգացման ընթացքը: Գիտեմ, որ որոնվող գիրք է:

Գասպարյանը ժամանակակից ամենահայտնի եւ ամենասկզբունքային քննադատներից մեկն է: Նրա հոդվածները միշտ էլ աչքի են ընկել գրական բարձր պահանջներով՝ ելակետ ունենալով գրական եւ գեղագիտական չափանիշը: Դա սկզբունքային եւ հետեւողական պայքար է հանուն արդի հայ գրականության կայացման, արժեքների վավերացման եւ ընդդիմախոսություն՝ ուղղված միջակությանը: Նա հանդես է եկել հարյուրավոր հոդվածներով, որոնք ի մի են բերված *«Բանաստեղծության ոգին»* (1980), *«Ժամանակ եւ շարժում»* (1984), *«Հելիկոնի աստղը»* (1988), *«Հայրենիք եւ ճակատագիր»* (1991), *«Երկնային շուշան»* (2004), *«Քննադատությունն ընդդեմ քննադատության»* (2012) եւ այլ գրքերի մեջ:

Որպես քննադատ՝ Գասպարյանը զեկուցումներով, ելույթներով հանդես է եկել գրական համագումարներում, հոբելյանական նիստերում, միջազգային բազմաթիվ գիտաժողովներում եւ գրական նստաշրջաններում: Արդի հայ գրական կյանքում նա ունի իր որոշակի տեղն ու դիրքը, ինչի համար արժանացել է Մովսես Խորենացի, Երախտագիտություն մեդալների, Արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչման:

Անհրաժեշտ է ավելացնել նաեւ այն ներդրումը, որ նա ունի սփյուռքահայ (Կոստան Զարյան, Հակոբ Օշական, Համաստեղ, Հակոբ Կարապենց, Մուշեղ Իշխան) եւ օտարագիր հայ գրողների (Վիլյամ Սարոյան, Լեւոն Զավեն Սյուրմելյան, Ալիսիա Կիրակոսյան, Դայանա Տեր-Հովհաննիսյան, Մայքլ Առլեն Կրտսեր, Սեւդա Սեւան, Փիթեր Բալաքյան, Դավիթ Խրդյան, Վարուժան Ոսկանյան) ժառանգության ուսումնասիրության գործում:

Գրականության տեսության ասպարեզում Գասպարյանի բերած նորությունը կապվում է տեսական հարցերի պատմական ուսումնասիրության հետ: Ոչ թե ընդհանուր տեսական հասկացություններ, այլ այդ հասկացությունները գրապատմական ընթացքների մեջ: Նա ոչ թե տեսական դատողությունները պարտադրում է գեղարվեստական գրականությունը, այլ գրականության բնույթից է բխեցնում տեսական յուրահատկությունը: Այս առումով հատկապես առանձնանում են նրա *«Սովետահայ պոեզիայի տաղաչափությունը»* (1979), *«Լույսի եւ գույնի գեղագիտությունը հայ պոեզիայում»* (1986), *«Հայկական ապագայապաշտություն»* (2009), *«Գրականության տեսություն»* (2012) եւ այլ աշխատություններ:

Բնագրագիտության ասպարեզում Գասպարյանը բերեց շատ մեծ նորություն՝ կապված Չարենցի, Բակունցի անտիպ ժառանգության հայտնաբերման եւ տպագրության հետ: Դա շատ ծանր ու պատասխանատու աշխատանք է, որ նա իրականացրեց գիտնականի բծախնդրությամբ եւ ճշգրտությամբ՝ դրանով իսկ ընդլայնելով այդ գրողների մասին մեր ունեցած նախնական պատկերացումները: Ասվածի վկայություններն են նրա հեղինակությամբ եւ աշխատասիրությամբ լույս տեսած *«Ողբերգական Չարենցը»* (1990), Ե. Չարենց՝ *«Նորահայտ էջեր»* (1996), Ա. Բակունց՝ *«Ժառանգություն»* (1999), *«Ալեքսանդր (Ակսել) Ստեփանի Բակունց: Մեղադրական գործ N 4131»* (1999) գրքերը: Այս շրջանակում պետք է դիտել նաեւ Գասպարյանի կազմած *«Չարենցի հետ. Հուշեր»* (գիրք 1, 1997, գիրք 2, 2008) արտակարգ հարուստ հրատարակությունը: Նա հրատարակել է անտիպ բնագրեր նաեւ Իսահակյանի, Մահարու, Սեւակի ժառանգությունից:

Ընդհանրապես, մեծ է նրա դերը 1937-

ին հալածանքների ենթարկված մեր գրողների, գրական ու մշակութային գործիչների կյանքի եւ ստեղծագործության անհայտ էջերի ուսումնասիրության ասպարեզում, որի արտահայտությունը հայ գրականագիտական մտքի մնայուն ձեռքբերումն է՝ *«Փակ դռների գաղտնիքը»* (1994) գիրքը: Այն ունեցավ հանրային մեծ արձագանք, առանձին նյութեր վերահրատարակվեցին նաեւ սփյուռքում: Սա եւս նրա որոնվող գրքերից է:

Ասեմ նաեւ, որ նա առաջինն է անդրադարձել մեր մի շարք գրողների ժառանգությանը, որոնք արգելված կամ սքողված էին նախկինում: Այդ անունների շարքում են Ռենը (Ռուբեն Վարդանյան), Կարեն Միքայելյանը, Հակոբ Կարապետը:

Նրա գործունեության մեջ իր տեղն ունի նաեւ մատենագիտությունը, որը գրականագիտության փաստական եւ ժամանակագրական հիմքն է: Կազմել է նորագույն շրջանի հայ գրականության տարեգրությունները՝ *«История советской многонациональной литературы. Летопись 1917-1967 гг. (М., §Наука:, 1974), «Սովետահայ գրականության տարեգրություն. 1957-1975»* (հեղինակակցությամբ, 1977): Կազմել է նաեւ Չարենցի եւ Բակունցի կյանքի եւ գործունեության տարեգրությունները:

1988-ից սկսած՝ Գասպարյանը հանդես է գալիս հրապարակագրական սուր հոդվածներով, որոնք վերաբերում են մեր կյանքի եւ իրականության առանձին դրսեւորումներին, հիմնականում՝ մշակույթի, լեզվի, ազգային ինքնագիտակցության, հայ մարդու կերպարի հարցերին: Այս նյութերը նախ՝ տպագրվել են մամուլում, ունեցել հանրային լայն արձագանք, ապա՝ զետեղվել նրա *«Հայրենիք եւ ճակատագիր»* (1991) եւ *«Երկնային շուշան»* (2004), *«Մարդասիրական բռնատիրություն»* (2014) գրքերում:

Առանձին պետք է դիտարկել հանրակրթական եւ բարձրագույն դպրոցին հասցեգրված Գասպարյանի վաստակը: Նա հեղինակ է ավագ դպրոցի 11-րդ եւ 12-րդ դասարանների *«Հայ գրականություն»* (հեղինակակցությամբ) եւ հիմնական դպրոցի 7-9-րդ դասարանների *«Գրականություն»* գործող դասագրքերի», որոնք տասնամյակների ընթացքում ունեցել են բազմակի հրատարակություններ: Շրջանառության մեջ են նրա հեղինակած *«Ուսուցչի ձեռնարկ»*-ները՝ հասցեագրված ե՛ւ հիմնական, ե՛ւ ավագ դպրոցներին: Կազմել է բարձրագույն ուսումնական հաստատություններին հասցեագրված հայ գրականության, սփյուռքահայ գրականության, արտասահմանյան գրականության, գրականության տեսության, գրական քննադատության ծրագրեր, որոնք ունեցել են մի քանի հրատարակություն: Մշակել է մեթոդական ցուցումներ, գրել մեթոդական նամակներ՝ հասցեագրված ուսուցչությանը:

Դավիթ. Գասպարյանը երեք տասնամյակ աշխատել է ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում: Կրտսեր լաբորանտից նա հասել է ինստիտուտի գիտական գծով փոխտնօրենի աստիճանի (1985-1989): Նա աչքի է ընկել ոչ միայն գիտական, այլեւ գիտակազմակերպական բարձր հատկություններով: Նրա խմբագրությամբ լույս են տեսել ինստիտուտի մակնիշը կրող բազմաթիվ գրքեր՝ մենագրություններ, պատմություններ, ժողովածուներ: Ղեկավարել է հայագիտության համար կարեւոր նշանակություն ունեցող հետազոտությունների ստեղծման աշխատանքը՝ *«Գրականությունը եւ ժամանակը»* (1980), *«Հայ սովետական պոեզիայի պատմություն»* (1987), *«Գեղարվեստական մեթոդ եւ գրական պրոցես»* (1990):

Մեծ է նրա ներդրումը երիտասարդ գիտաշխատողների տարեկան նստաշրջաններ կազմակերպելու (1985-1989), հայ հին եւ միջնադարյան գրականության միջազգային գիտաժողովը (1986) կազմակերպելու եւ անցկացնելու գործում: Նրա գիտական ղեկավարությամբ մեկ տասնյակից ավելի երիտասարդ մասնագետներ գրել ու պաշտպանել են ատենախոսություններ:

Գասպարյանը հետագայում աշխատել է ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսական բաժնի վարիչի տեղակալ, ԵՊՀ հրատարակչության տնօրեն, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ արտասահմանյան գրականության եւ տեսության ամբիոնի վարիչ, ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի կաբինետի վարիչ, գլխավոր մասնագետ: Տարբեր տարիների խմբագրել է *«Քննադատական տարեգիրք»* հանդեսը, *«Հայոց լեզու եւ գրականություն»* գիտամեթոդական ամսագիրը: Այստեղ պետք է հիշատակել նաեւ նրա կազմած հայ քնարերգության *«Ոսկե շղթա»* ընտրանին, որը կարճ ժամանակաշրջանում ունեցել է երկու հրատարակություն (2014, 2019): Մասնակցել է դասագրքեր, ծրագրեր, չափորոշիչներ ստեղծելու եւ ուսուցիչների վերապատրաստման աշխատանքներին՝ երբեք չկտրվելով իր գրականագիտական գործունեությունից: Վկայությունը տպագրության սպսող վերջին ծավալուն գիրքն է՝ *«Եղիշե Չարենցի կյանքն ու ժամանակը»:*

Այս ընթացքում բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյանը մշտապես աչքի է ընկել գիտական բարձր որակներով, կազմակերպական անուրանալի հատկություններով, մարդկային արժանիքներով, որոնք այսօր ըստ պատշաճի պիտի հիշատակենք, քանի որ առիթը հանդիսավոր է՝ գրական-մշակութային հանրությունը նշում է նրա գրականագիտական հաստատուն գոյության 75-ամյակը: Պատահական չէ, որ ճանաչողները նրան ասում են օրենքով գրականագետ:

Արտեմ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Խմբագրության կողմից. – Ջերմորեն շնորհավորելով թերթի բարեկամ **Դավիթ Գասպարյանին՝** ծննդյան **75**-ամյակի առթիվ եւ միանալով բոլոր բարեմաղթանքներին՝ *«Կրթություն»* շաբաթաթերթի խմբագրակազմը նաեւ գոհունակությամբ նշում է, որ բազմիցս առիթ է ունեցել առաջինը տպագրելու անվանի գրկանագետի հոդվածներն ու աշխատությունները, այդ թվում՝ շարունակաբար նաեւ *«Եղիշե Չարենցի կյանքն ու ժամանակը»* ստվարածավալ ամբողջական կենսագրությունը՝ մեծ բանաստեղծի ծննդյան 125-ամյա հոբելյանը ավետող՝ 2022 թ. մարտի 23-ի համարից առ այսօր եւ հետայսու:

Գրականագիտական

Եղիշե Չարենցի կյանքն ու ժամանակը. 1920 թվական

սկիզբը՝ «Կրթություն» թիվ 39

1920, 15 մարտ – *«Հայաստանի կոոպերացիա»*-ում (թիվ 5)

Չարենցը տպագրում է *«Կարոտ»* բանաստեղծության 2-րդ մասը:

1920, 2 ապրիլ – Հայ գրողների ընկերության նախագահ Թումանյանի նամակը Թիֆլիսից Երեւան ՀՀ կրթության եւ արվեստի պ. մինիստրին (Ն. Աղբալյանին). *«Քաջածանոթ լինելով հայ գրական մարդկանց վիճակին՝ գալիս եմ հայտնելու, որ նրանք ընդհանրապես գտնվում են վերին աստիճանի ծանր դրության մեջ, եւ խնդրում եմ արտակարգ կերպով օգնության հասնեք մեր էդ թանկագին ուժերին, որոնք կազմում են հոգեւոր Հայաստանը:*

Միառժամանակից հետո, թերեւս. նրանցից ոմանց համար արդեն ուշ լինի ամեն օգնություն»:

«1920, 18 մարտ» թվագրությամբ մակագրված է. *«Հեռագրել, որ գտնե եւ վճարե 5000 ռ. մինչեւ փոխադրել կարենամ, փոխադրել 5000 որեւէ հոդվածից: Հետագայում վերականգնել համապատասխան վարձից»* (Հ. Թումանյան, ԵԼԺ, X, 1999, էջ 346-347, 681):

Այս ընթացքում իրենց մահկանացուն են կնքում Մամբրե Մատենճյանը (մարտի 24-ին), Վրթանես Փափազյանը (ապրիլի 26-ին):

1920, 15 ապրիլ – *«Հայաստանի կոոպերացիա»*-ում (թիվ 7) Չարենցը տպագրում է *«Վերադարձ»* բանաստեղծությունը:

1920, 20 ապրիլ – Լեւոն Շանթի գլխավորությամբ կազմվում է հանձնաժողով Ռուսաստանի հետ բանակցելու եւ պայմանագիր կնքելու նպատակով:

1920, 22 ապրիլ – Նամակ Երեւանից Թիֆլիս Արշավիր Խոնդկարյանին՝ *«Ողջակիզվող կրակ»* եւ *«Էմալե պրոֆիլը Չեր»* շարքերը առանձին գրքով տպագրելու մասին: Ցուցումներ է տալիս հոնորարն ստանալու եւ գրքի շարվածքի վերաբերյալ. *«…տողերը թող չսկսվեն գլխատառով, այլ գլխատառերը գործածեք վերջակետից վերջակետ: Եթե հնարավոր է՝ լավ կլինի, որ վերջին երկու-երեք երեսը բաց մնան: Լավ կլինի նույնպես, որ տեքստում ոչ մի զարդանկար, կամ ծաղիկ, կամ նշաններ չլինեն: Կետադրությունը եւ ուղղագրությունը անպայման մնա նույնը»:*

Գրքի տպագրությունը չի իրականացել:

1920, 26 ապրիլ – Քեմալ Աթաթուրքի նամակը Լենինին, որով խնդրում է ռազմական դաշինք եւ օգնություն՝ ոսկի, զինամթերք, ռազմական տեխնիկա, բժշկական գույք, պարենամթերք: Ռուսաստանի աջակցությանն արժանանալու նպատակով առերես իրենց հայտարարում են հեղափոխության կողմնակիցներ եւ սոցիալիստներ: Քեմալն ստեղծում է իրեն ենթակա կոմունիստական կուսակցություն եւ Ռուսաստանից ստանում՝ 39.275 հրացան, 63 մլն փամփուշտ, 327 գնդացիր, 54 թնդանոթ, 20.000 հակագազ, 129.479 արկ, 2 ծովային կործանիչ, ավելացրած ոսկով եւ ռուբլիով միլիոնների հասնող պարբերական օգնությունները:

1920, 28 ապրիլ – Ոչ միայն Խորհրդային Ռուսաստանի, այլեւ Թուրքիայի աջակցությամբ Ադրբեջանում հաստատվում է խորհրդային իշխանություն: Երկու երկրների շահերը այսպես համընկնում են նաեւ ամեն մի առիթով Հայաստանը հոշոտելիս: Ապրիլի 30-ին Ադրբեջանի Հեղկոմը վերջնագիր է հղում ՀՀ կառավարությանը՝ Ղարաբաղից եւ Զանգեզուրից դուրս բերելու Դրոյի ղեկավարած զորքերը:

1920, ապրիլ-մայիս – Այս միջակայքում գրում է *«Մարիոնետկա»* բանաստեղծությունը. մարիոնետկա՝ խաղատիկնիկ, խամաճիկ, փոխաբերաբար՝ ուրիշի ձեռքին խաղալիք դարձած անձ: Կան նաեւ մարիոնետային պետություններ: Այստեղ մարիոնետկան ստվերի պես երերուն, մահաշունչ

անձնավորություն է, որ իրենով խորհրդանշում է Հայաստանի ողբերգական դատապարտվածությունը: Հայոց պատմական բախտի ուրվականն է՝ անձնավորված որպես բանաստեղծի ճակատագիր.

Ու սո՜ւր ճչաց՝ կարծես բռնի
Աչքերն, անշարժ, հեռուն գամած.-
Այդպես հոգի՛ս պիտի մեռնի-
Կամա՜ց, կամա՜ց, կամա՜ց, կամա՜ց…
(ԵԺ, I, էջ 318):

Գրված է աննկատ կուտակվող ներքին հզոր լարումը կշռույթի վերածող հազվադեպ հանդիպող քառոտնյա յամբերով:

1920, 1 մայիս – Մայիսյան ապստամբության օրերին չի թաքցրել քաղաքացիական կարմիր կողմնորոշումը: Քաղաքներում՝ Երեւանում, Գյումրիում, Կարսում, Սարիղամիշում եւ այլուր, ժողովուրդը դուրս էր եկել ցույցերի, փողոցներում հակակառավարական հանրահավաքներ էին ու կոչեր: Չարենցը Աբովյանով իջնող զանգվածի հետ էր եւ ներշնչված էր այդ տարերքով… Ցուցարարները պահանջում էին իշխող վարչակարգի տապալում եւ խորհրդային իշխանության հաստատում: Մայիսյան ապստամբությունը ճնշվում է, ծայր են առնում քաղաքացիական եղբայրասպան արյունոտ բախումներ, ինչն էլ ջլատում է ժողովրդի միասնականությունը:

Չարենցը եւս հայտնվում է անբարեհույսների շարքում՝ հետապնդվում է եւ զգուշանում խուզարկությունից: Այս օրերի տենդը արտահայտվել է գրական բազմաթիվ գործերում՝ *«Մարիոնետկաե, «Վահան Տերյանի հիշատակին», «Մահվան տեսիլ», «Աստղիկ»:* 1920-ին է ավարտել *«Ողջակիզվող կրակ»* շարքի *«Առավոտե ենթաշարքը, սկսել է «Տաղարան»-ը, որ պիտի ավարտվեր «Հայաստանինե եւ «Ես իմ անուշ Հայաստանի…»* գործերով:

Մայիսյան ցույցերի արձագանքն առկա է *«Չարենց նամե»*-ի XX գլխում:

1920, 10-12 մայիս – Բոլշեւիկների ապստամբությունը Կարսում:

1920, 15 մայիս – *«Հայաստանի կոոպերացիա»*-ում (թիվ 9) *«Գազելների գրքից»* խորագրի ներքո Չարենցը տպագրում է *«Հիմա հիշում եմ բոլոր օրերս հին ու անցած»* գործը:

1920, 16 մայիս – Տերյանի մահվան կապակցությամբ Չարենցն իր մորմոքը հայտնում է *«Վահան Տերյանի հիշատակին»* եռամաս բանաստեղծությամբ, որ մեկ ամիս անց տպագրում է *«Հայաստանի կոոպերացիա»* երկշաբաթաթերթում (1920, թիվ 13, 15 հուլիս):

Ինչպես այս, այնպես եւ 1928-ին գրած *«Մեռած պոետին»* բանաստեղծության մեջ Չարենցը Տերյանին տեսնում է որպես իր գրական սերունդի հոգեւոր առաջնորդ, մինչդեռ 1922-1923 թթ. մի շարք հոդվածներում Տերյանը բնորոշվում էր ընդամենը միջանկյալ օղակ Թումանյանի եւ իր սերունդի միջեւ:

1920, 31 մայիս – *«Հայաստանի կոոպերացիա»* երկշաբաթաթերթում (1920, թիվ 10) տպագրվում է Վեսպերի *«Սուգ (Վահան Տերյանի հիշատակին)»* բանաստեղծությունը:

1920, մայիս-սեպտեմբեր – Շանթի գլխավորած պատվիրակության ձախողված առաքելությունը Մոսկվայում, որին բոլորի հետ մեկտեղ ուշիուշով հետեւում էր նաեւ Չարենցը: Ռուսաստանի արտաքին գործոց ժողովրդական կոմիսար Չիչերինի հետ պատվիրակության կողմից անմիջականորեն բանակցում էր Կարախանը: Անգամ հարցն այնպես է դրվել, որ Հայաստանը կարող էր մնալ չբոլշեւիկացված անկախ երկիր (տես՝ Ս. Վրացյան, *«Հայաստանի Հանրապետություն»*, Թեհրան, 1982, Շանթի նամակները, էջ 608-615): Այսպես թե այնպես, Հայաստանը պատրաստի պատառ էր Ռուսաստանի եւ իր դաշնակից քեմալական Թուրքիայի համար: Շանթի պատվիրակության բանակցությունները ձգձգվում ու ձախողվում են ռուսական կողմի պատճառով, որովհետեւ նախապատրաստվում էր Սեւրի դաշնագիրը, իսկ Ռուսաստանին համաշխարհային հեղափոխության վստահություն ներշնչած Թուրքիան շարունակում էր իր մահաբեր արշավանքները Հայաստանում: Ձգձգումը պայմանավորված էր դեպքերի զարգացման սպասումով:

1920, 1 հունիս – *«Խնդիր»*-ով Չարենցը դիմում է հանրային կրթության եւ արվեստի *«մինիստրին»*՝ ազատվելու հատուկ հանձնարարության կոմիսարի պաշտոնից:

Պատճառը քաղաքական անվստահությունն էր, որովհետեւ, որպես կոմունիստ, մասնակցել էր մայիսյան ցույցին, անգամ ենթարկվել հետապնդումների: Ազատման հրամանը հունիսի 4-ի (թիվ 126) ստորագրել է մայիսի 16-ից Աղբալյանին փոխարինած նախարար Գեւորգ Ղազարյանը. Ըստ այդմ՝ հունիսի 1-ից, *«համաձայն իր խնդրի»*, Չարենցն ազատվում է պաշտոնից:

1920 թ. փետրվարի 3-ին Չարենցը վերցրել է մի *«Վկայական»*, ըստ որի՝ հունվարի 1-ից վարում է հատուկ հանձնարարությունների կոմիսարի պաշտոնը (ԳՄ, էջ 436):

1920, 6 հունիս – Խորհրդարանի դահլիճում Ն. Աղբալյանը հանդես է գալիս *«Հայ գրականության ապագայի մասին»* զեկուցմամբ: Հայ գրականության գալիք օրվա մտահոգությունը օրախնդիր հարց էր, որ, Տերյանից բացի, Աղբալյանից բացի, եղեռնից առաջ *«Վաղվան գրականություն»* կարգախոսով արծարծում էին նաեւ արեւմտահայ գրողները:

1920, հունիս - նոյեմբեր – Ըստ *«Համառոտ կենսագրության»*՝ 1920-1921 թթ. Երեւանում աշխատել է՝ որպես մանկատների ուսուցիչ:

Ըստ 1923 թ. օգոստոսի 11-ի հարցաթերթիկի՝ *«1919 / VII – 1920 / XII, 1 տարի 5 ամիս»,* որպես ուսուցիչ, աշխատել է Երեւանի Ամերկոմի ուսումնարանում (ԳՄ, էջ 287):

Նախարարությունից ազատվելուց հետո Օհան Կարոյի միջնորդությամբ երկրորդ որբանոցում նրան աշխատանքի է տեղավորել Նշան Հովհաննիսյանը, ով հետագայում հանդես է եկել *«Եղիշե Չարենց: Անձնական հանդիպումներ»* հուշագրությամբ. *«Չարենցն ալ «դաստիարակ»* եղավ Վեքելեվսկայա փողոցի որբանոցին մեջ, ուր էր նաեւ մեր բնակարանը: Մինչ այդ աշխատել է նաեւ 13-րդ որբանոցում, որտեղից ազատվել է հունիսի 1-ին:

Դաստիարակ լինելու հետ մեկտեղ Չարենցը մայրենիի եւ աշխարհագրության ուսուցիչ էր Երեւանի ամերիկյան երրորդ մանկատան դպրոցում: Որբերի տրամադրությունը փոքր-ինչ բարձրացնելու համար դասամիջոցներին բակում նրանց հետ շուրջպար է բռնել:

Հերթական աշխատավարձն ստանալուց հետո իր գրվածքներով հետաքրքրված մանկատան սաներին՝ Հենրի Գաբրիելյան, Գեւորգ Պարիս (Պարոնիկյան), Հովհաննես Կանտոյան, հրավիրում է *«Ֆրանսիա»* պանդոկ՝ ընթրիքի:

Այս մանկատանն էին նաեւ Խորեն Աճեմյանը (Ռադիո), Ադո Ադոյանը: Չարենցը նրանց հետ անցկացնում է գրական պարապմունքներ. քննարկում է Հակոբ Հակոբյանի, Գառնիկ Քալաշյանի գործերը: *«Իր ստեղծագործությունները Չարենցը մեզ չէր կարդում՝ հավանաբար զգուշանալով բոլշեւիկյան քարոզչության մեղադրանքից…»* (Խորեն Ռադիո, Չարենցը որպես բանաստեղծ եւ անհատականություն.- *«Հայոց լեզու եւ գրականություն»,* 2017, թիվ 3, էջ 46):

Պատերազմի ժամանակ որբերին տարել են *«ցեյխհաուզներ՝ ռազմաճակատի համար փամփուշտներ մաքրելու»:*

Արշալույս Ջանիկյան. *«Ես բախտ եմ ունեցել Չարենցի հետ ուսուցիչ լինելու, նրա հետ ապրելու 1920 թվականի խառնաշփոթ, ողբերգական օրերը:*

Դպրոցը՝ կազմակերպված Երեւանի հիվանդ երեխաների ամերիկյան մանկատանը կից, բաղկացած էր երեք դասարանից, հետեւյալ ուսուցչական կազմով. երրորդ դասարանի դաստիարակ-ուսուցիչ Եղիշե Չարենց, երկրորդ դասարանի ուսուցչուհի Արփիկ Աստվածատրյան (հետագայում՝ Չարենց), առաջին դասարանում՝ ես:

Բանաստեղծ Չարենցը դարձել էր ուսուցիչ եւ որբանոցի կիսաքաղց երեխաներին հայոց լեզու, թվաբանություն էր սովորեցնում՝ սնվելով մանկատան խղճուկ սնունդով, եւ միշտ համոզված, որ դա ժամանակավոր երեւույթ է:

Որբանոցի կառավարչուհին՝ Լուսնթագ Խանիկյանը, գնահատելով Չարենցի արժանիքները, հնարավորություն էր ստեղծել, որ նա կարողանա նաեւ ստեղծագործել, գրել. որբանոցում նրա համար առանձնացրել էր մի փոքր սենյակ»: Այլեւայլ գործերի հետ մեկտեղ այդ սենյակում է ծնունդ առել *«Ես իմ անուշ Հայաստանի արեւահամ բառն եմ սիրում»* տաղը: Արփիկը, Արշալույսը, Լուսնթագը եղել են բանաստեղծի նոր գործերի առաջին ունկնդիրները:

շարունակությունը՝ էջ 10

Փոձի՛ր մտապահել

Բանաստեղծներն են հուշում

սկիզբը՝ «Կրթություն» թիվ 26

160) Իմաստություն

«Աստղեր թովիչ, բոց ու կայծ,
Ցնորքներ վառ ու առկայծ,
Հավատ ուժի, մեծության, Փառքի, կամքի գոյության,
Շռինդ, թնդյուն, հպարտանք,
Իմաստությո՛ւն... բյո՛ւր պատրանք»: Լեւոն Շանթ

«Տիեզերական հազարահանդես դու մեծ խրախճանք, բարի՛ արեգակ,
... Քո երջանկությամբ, քո իմաստությամբ, քո հավերժությամբ հարբեցրու՝ ինձ»: Ավետիք Իսահակյան

Փիլիսոփա Իմանուիլ Կանտը մի անգամ ասել է՝ *«Գիտությունը կանոնակարգված գիտելիք է, իմաստությունը՝ կանոնակարգված կյանք»:* Նշանավոր տեսաբան ֆիզիկոս Միչիո Կակուն էլ տալիս է իր սահմանումը. *«Իմաստությունն այն է, ինչն օգնում է մեզ հասկանալ մեր ժամանակի առաջնային հարցերը, վերլուծել դրանք տարբեր տեսանկյուններից եւ ապա ամբողջի միջից ընտրել նրանք, որոնք երբեւէ ազնիվ նպատակ կամ սկզբունք են հետապնդում»:*

Ամերիկացի ֆանտաստ գրող Այզեկ Ազիմովն էլ դժգոհում է. *«Ներկայիս հասարակության ամենատխուր կողմն այն է, որ գիտությունը շատ ավելի արագ է գիտելիք ձեռք բերում, քան հասարակությունը՝ իմաստություն: Եթե տեղեկատվությամբ կարելի է կիսվել տարբեր առցանց զրուցարաններում, իմաստության դեպքում դա չի ստացվի: Տեղեկատվական օվկիանոսի ֆոնին իմաստությունը դառնում է ժամանակակից հասարակության ամենից արժեքավոր ապրանքը»:*



Բայց որտեղի՞ց է գալիս իմաստությունը: Ուղիներից մեկը՝ բանավեճն է: Հաճախ այն կարող է խառնաշփոթ ու կոպիտ լինել, բայց ծխի ու որոտի միջից իսկական պայծառություն է գալիս: Բանավեճի մեջ ժողովրդավարություն է պետք, թեեւ նրանով չհիացած Ուինքոն Չերչիլը մի անգամ սրամտորեն ասել է. *«Ժողովրդավարությունը կառավարման վատթարագույն ձեւն է՝ չհաշված մյուս բոլոր ձեւերը, որոնք երբեւէ կիրառվել են»:* Իսկ երգիծանքի մեծ վարպետ Բեռնարդ Շոուն ասում է՝ *«Ժողովրդավարությունն այն գործիքն է, որը երաշխավորում է, որ մեզ կկառավարեն ոչ ավելի լավ, քան արժանի ենք»:*

Մարդկանց ժողովրդավար, թունդ բանավեճերի մղելու ամենավստահելի եղանակը կրթությունն է, քանզի իմաստուն որոշում կայացնելու համար մարդիկ պիտի կրթված լինեն:

Իմաստությունը պահանջում է հազար երանգներով ասել՝ *«կարող է»* եւ *«հնարավոր է»:* Այն պահանջում է բազում այլ բաներ նույնպես, եւ դրանց մեջ, ըստ հայտնի մաթեմատիկոս Դ. Պոյայի, երեք բան:

«Նախ եւ առաջ՝ մենք պետք է պատրաստ լինենք վերանայելու մեր պարտականություններից յուրաքանչյուրը:

Ապա եւ՝ մենք պետք է կարողանանք փոխել մեր պատկերացումները, երբ կան ծանրակ շիռ հանգամանքներ, որոնք ստիպում են այդպես վարվել:

Վերջապես, մենք չպետք է փոխենք մեր պատկերցումները՝ առանց բավարար պատճառներ ունենալու»:

Մտորե՛նք ասվածի շուրջը: Իմաստուն լինելու համար, համաձայն առաջին սկզբունքի, պահանջվում է *«մտքի արիություն»՝* պատկերացումներ փոխելու համար:

Երկրորդ սկզբունքը պահանջում է *«մտքի ազնվություն»*: Հավատարիմ մնալ սեփական՝ թեեւ փորձով հերքված պատկերացմանը միայն այն բանի համար, որ այն բոլորն են այդպես մտածում, անմտություն կլիներ:

Պոյան խորհուրդ է տալիս՝ *«Իմաստուն կլիներ մեր ամենօրյա աշխատանքը, մեր կասկածները նպատակաուղղել այն խնդիրներին ու պատկերացումներին, որոնք մենք խելամտորեն հույս ունենք ուղղելու: Ավելի լավ է թեկուզ եւ ոչնչի չհավատալ, բայց կասկածել միայն այնտեղ, որտեղ արժե իսկապես կասկածել»:*

Ավարտենք մի առակով, որ կոչվում է *«Մեծագույն իմաստություն»:*

Մի անգամ գիշերն այն նահանգում, ուր տեղակայված էր վանական համալիրը, առատ ձյուն տեղաց: Առավոտյան, երբ աշակերտները հավաքվեցին սրահներից մեկում, ուսուցիչն ասաց՝ ի՞նչ անենք, որ այս ձյունը մաքրվի: Աշակերտներից մեկն առաջարկեց աղոթել, որ եղանակը տաքանա, մյուսն ասաց, որ պետք չէ սենյակներից դուրս գալ մինչեւ ձյունը հալվելը, երրորդն էլ հավելեց, թե նրա համար, ով ճանաչել է իմաստությունը, միեւնույն պիտի լինի՝ կա՞ ձյուն, թե ոչ:

Ուսուցիչն ուշադիր լսեց բոլորին ու ասաց. *«Իսկ այժմ վերցնում ենք թիակներն ու գնում ձյունը մաքրելու»: Առակս զինչ ցուցանե՞»:*

Արված գործն է իմաստությունը:

161) Ինքնատիրապետում

«Քանզի մեկն ես...
Մարդ, որ բախտի հարվածներն ու պարգեւները
Ընդունում է նույն գոհությամբ...
Եթե ցույց տաս ինձ մի մարդու,
Ով ծառա չէ իր կրքերին,
Ես կկրեմ նրան սրտիս խորքում,
Այո՝ սրտիս սրտում,
ինպես որ՝ քեզ...»

(Շեքսպիր, «Համլետ»)

Ինքնատիրապետումը՝ *«կրքի ծառան»* դառնալու փոխարեն Բախտի կողմից նետված հուզական փոթորիկներին դիմակայելու կարողությունը, դեռեւս Պլատոնի ժամանակներից առաքինություն է համարվել: Հույները դա անվանում էին *«ուշիմ ու խելացի կերպով սեփական կյանքի կառավարում, կայուն հավասարակշռություն եւ իմաստություն»:*

Վաղ քրիստոնեական եկեղեցին եւ հռոմեացիներն այն անվանում էին ժուժկալություն՝ ավելորդ հուզականության զսպում: Նպատակը ոչ թե հուզականության ճնշումն է, այլ հավասարակշռությունը. յուրաքանչյուր զգացմունք իր արժեքն ու նշանկությունն ունի: *«Կյանքն առանց կրքի կնմանվեր չեզոքության ծանծրալի անապատի՝ կտրված ու մեկուսացված բուն կյանքի հարստությունից»,-* նկատում է Դենիել Գոուլմանը: Բայց, ինչպես Արիստոտելն էր դիտարկում, խնդիրը համապատասխան, իրադրությանը համոզիչ հույզ գտնելն է: Երբ հույզերը չափազանց խլացված են, առաջ է գալիս միապաղաղություն եւ օտարվածություն, իսկ երբ վերահսկողությունից դուրս են, ծայրահեղ ու հաստատուն, ապա հետզհետե դառնում են ախտաբանական, ինչպես կաշկանդող դեպրեսիայի, անհաղթահարելի թվացող տագնապի, կատաղի բարկության կամ մոլեռանդության դեպքում:

Եվ իսկապես, բացասական հույզերը վերահսկողության տակ առնելը հուզական բարեկեցության կարեւորագույն նախապայման է. ծայրահեղությունները (չափազանց բռնկուն կամ տեւական հույզերը) սպառնում են մեր հոգեկան կայունությանը: Բայց դա, իհարկե, չի նշանակում, որ մենք միայն մի տեսակի՝ ուրախ հույզեր պետք է ունենանք: Տառապանքը կառուցողական ազդեցություն ունի ստեղծագործական եւ հոգեւոր կյանքի վրա. տառապանքը կարող է կոփել հոգին:

Վերելքներն ու վայրէջքները համուհոտ են հաղորդում կյանքին, սակայն, մյուս կողմից, դրանք պետք է հավասարակշռեն միմյանց: Դրական ու բացասական հույզերի հարաբերակցությունն է պայմանավորում բարեկեցության զգացումը: Ընդհանուր գոհունակություն զգալու համար մարդիկ կարիք չունեն խուսափելու տհաճ զգացմունքներից. բավական է միայն, որ բուռն հույզերը վերահսկողությունից դուրս չգան՝ գրավելով դրական տրամադրության տեղը: Մարդիկ, որոնք բուռն զայրույթի պոռթկումներ կամ դեպրեսիա ունեն, կարող են պահպանել ինքնազգացողությունը, եթե դրանց հակառակվող ուրախ կամ երջանիկ ապրումներ ունեն:

Այնուհանդերձ, սեփական հույզերի կառավարումը ամենօրյա աշխատանք է. օրվա մեծ մասը մենք փորձում ենք կառավարել մեր տրամադրությունը: Կրքերը հանդարտեցնելու արվեստը կյանքի հիմնարար հմտություններից է: Գլխուղեղի կառուցվածքով պայմանավորված, հաճախ մեջ վերահսկողությունից դուրս է, թե երբ եւ ինչ հույզերի պոռթկում կարող է տեղի ունենալ մեզ հետ: Սակայն մենք կարող ենք որոշակի ազդեցություն ունենալ դրանց տեւողության վրա: Նման խնդիր չի ծագում սովորական տխրության, անհանգստության կամ բարկության դեպքում. որպես կանոն, նման տրամադրությունները ժամանակի ու համբերատարության արդյունքում անցնում-գնում են: Բայց երբ հույզերը չափազանց բուռն են ու անհրաժեշտ, ժամանակից ավելի երկար են տեւում, ապա վերափոխվում են այդ նույն հույզերի տանջալից ծայրահեղությունների՝ քրոնիկ տագնապի, անվերահսկելի զայրույթի, ընկճախտի: Իսկ դրանց ամենածանր ու համառ դեպքերում դեղորայքային բուժման, հոգեթերապիայի կամ այդ երկուսի համադրության կարիքն է լինում:

Հոգեբաններ կան, ովքեր պնդում են, որ երբեք պետք չէ փորձել փոխել տրամադրությունը. բոլոր հույզերն էլ *«բնական»* են եւ պետք է ապրվեն ինչպես որ կան՝ անկախ իրենց ճնշող ազդեցությունից: Բայց շատ մարդիկ գանգատվում են տրամադրության քմահաճույքին ենթարկվելուց: Վատ տրամադրությունը թոթափելու մարդկանց գործիքներն անշուշտ միատարր չեն. պետք է պարզապես տիրապետել ինքնատիրապետման արվեստին:

... Նկարում՝ Վ. Լեւիի *«Ինքնատիրապետման արվեստը»* գրքի շապիկը:

162) Ծաղիկների *«լեզուն»*

«Այս ծաղիկները նման են աշխարհի հաճույքներին» (Վիլյամ Շեքսպիր)

«Երկիրը ժպտում է ծաղիկների միջով»: (Հայնրիխ Հայնե)

«Թո՛ղ վարդը իր թփին: Եթե քաղվի՝ նա կմեռնի, եւ դու չես տեսնի նրա գեղեցկությունը եւ հոտը չես առնի: Թո՛ղ վարդը իր թփին: Մի՞թե դու չես կարող չքաղած հիանալ նրանով: Թ՞ող վարդը իր թփին: Եթե չքաղես նրան, քեզ համար կասեն՝ դու իմաստուն ես, դու գթությամբ լցված ես.իսկ եթե քաղես, կասեն, որ քո ձեռքերը վայրագ են, քո սիրտը անողորմ: Թ՞ող վարդը իր թփին»: Հաֆեզ (ըստ Աթաբեկ Խնկոյանի)

Ֆլորիոգրաֆիան, կամ ծաղիկների լեզուն, գոյություն ունի անհիշելի ժամանակներից: Ծաղիկները խորհրդանշական դեր են ունեցել հին քաղաքակրթություններում՝ Ասիայում եւ Աֆրիկայում, Հնդկաստանում եւ Չինաստանում: Աստվածաշնչում հիշատակվում են բույսերի իմաստները եւ հատուկ նշանակությունը: Ծաղիկների լեզուն հայտնի էր Միջին դարերում ու Վերածննդի դարաշրջանում: Վ. Շեքսպիրը դրանք օգտագործել է իր թատերախաղերում ու սոնետներում: Իսկ Վիկտորիայի ժամանակներում ծաղիկների լեզուն օգտագործում էին զգացմունքները գաղտնի արտահայտելու համար այն դեպքերում, երբ դրանց մասին չէր կարելի բաց խոսել: Ուրեմն՝ ի՞նչ են արտահայտում ծաղիկներն իրենց տեսքով ու բույրով:

Մարտիրոս Սարյան, *«Նատյուրմորտ: Ծաղիկներ»*

Լեռնավարդը (ազալիս) կանացիության ու նվիրվածության խորհրդանիշն է, Անյուտայի աչքերը՝ ուրախության հայտանիշ է, նվիրելով դրանք՝ դու օդային համբույր ես ուղարկում ստացողին, աստղածաղիկը նրբություն է ու սեր, կապույտ տերեփուկը ջահել աղջիկներին նվիրում են ի նշան համակրանքի, մեխակը խորհրդանշում է հմայք, հասմիկը՝ զգայականություն, կակտուսը՝ նպատակասլացություն, կամելիան՝ հիացում, կալա՝ խոնարհումն, երիցուկը՝ ռոմանտիկա, անմեղություն, քրիզանթեմը՝ երջանկություն...

Ահա մի գեղեցիկ լեգենդ ծաղիկների թագուհու՝ վարդի ու նրա խորհրդի մասին: Կար ժամանակ, երբ Երկինքն ու Երկիրը միասին էին ապրում՝ մարդիկ ու աստղերը: Երկրի արքան մի առնական տղա ուներ: Ամեն գիշեր նա բացում էր պատուհանն ու անտարբեր նայում երկնքին: Պայմանավորված ժամին երկնքից նրա մոտ էր իջնում շատ գեղեցիկ մի Աստղիկ: Նրանք սիրում էին միմյանց: Աստղիկը ոգեշնչված պատմում էր երկնքի վայելչագեղությունից ու հրաշալիքներից, խոսում հավերժական սիրո եւ հավատարմության մասին, տղան հիացած նայում էր նրան ու հասկանում՝ ինչ ասել է լինել երջանիկ: Դրանք նրանց քնքուշ սիրո ամենագեղեցիկ պահերն էին...

շարունակությունը՝ էջ 9

Բանաստեղծներն են հուշում

սկիզբը՝ էջ 8

Բայց եղավ այնպես, որ մարդկանց մեջ հայտնվեց չարությունը: Նրանք սկսեցին վնասել աստղերին: Երկնքի արքան վերցրեց իր հպատակներին ու բաժանվեց Երկրից... Գնաց, հեռացավ վեր, շատ վեր...

Չդիմացավ տղան բաժանման ցավին... Սիրուց, կարոտից ու սպասումից նա վերածվեց տխրադեմ վարդի, որի թերթիկները թախիծի ու տրտմության գույն ստացան... Գիշերային երկնքի թավշե գույնն էր դա..

Արքայորդին այնքան մաքուր ու գեղեցիկ էր սրտով, որ Աստղիկը որոշեց չթողնել նրան: Վերադարձավ երկիր կարապի տեսքով ու կարոտած գրկեց սիրելի վարդին: Ծաղկի փշերը անզգուշաբար ծակոտեցին կարապի թեւերը քնքուշ: Միայն առավոտյան նկատեցին, որ վարդը փոխել էր իր տխուր գույնը: Նա ալ կարմիր էր դարձել: Գեղեցիկ, ճշմարիտ ու լուսավոր սիրո գույն էր ստացել...

Վարդերի տարբեր երանգներին մարդիկ տարբեր խորհրդանշաններ են վերագրում: Կարմիրը կրքոտ սերն է, խորն ու քնքուշ կապվածությունը, վարդագույնը՝ նվիրողի *«քաղցր»* մտքերի նրբին ակնարկ է, նոր ծնվող զգացմունքների վկայություն, դեղին վարդերն ազատություն են, բայց նաեւ՝ անհավատարմություն եւ դավաճանություն: Կապույտ վարդերն անսովոր են, խորհրդավոր: Յասամանագույնը հմայք է, հիացմունք, դյութանք:

... Բոգդան Վերդյան, *«Ծաղիկներս մնացին հեռվում»:* Վեպը նկարագրում է Յեղասպանության դրվագներ, Սողոմոն Թեհլերյանի՝ զորավոր Անդրանիկի զորքի կազմում կռիվներին մասնակցելը, հայրենի Երզնկան ավերակների մեջ գտնելը, ծնողների կորուստը, սիրած աղջկա ինքնասպանությունը, դավաճան Արթին Մկրտչյանի սպանությունը Պոլսում, եւ, որ վեպի առանցքում է, Թալեաթի սպանությունը: Վեպի լեզուն բարձրակարգ հայերենն է, մի քիչ պաթետիկ:

«Թաղման ժամանակ ոտքերի տակ մնացած ծաղիկներ են: Ի՜նչ պիտի տեսնեի, եւ ի՜նչ տեսա, Մարտիրո՛ս... Ջին փախցրեց Մարտիրոսին, եւ Ջոնին հետեւեց նրան: Երկուսն էլ փախչում էին իրենցից, մռայլ մտքերից, որ պետք չէին, ծանր էին, երբ ամեն ինչ պիտի թեթեւ լիներ: Թփուտների մեջ խլրտացին ձիերը: Մեկը թռավ ձիուց, լուսնի դեղին ցոլքերից մի բուռ հալվեց նրա ճակատին, լցվեց աչքերը եւ ծորաց դեմքն ի վար: Տիգրանն էր»:

163) Կենդանիների *«լեզուն»*

«Ծանոթ շները չեն հաչում վրադ, ծանոթ մարդիկ են հաչում քո վրա»: Ավետիք Իսահակյան

«Հորովելներ են ոլորվում դաշտին,
Սարերի վրա գառներ են մայում...»: Համո Սահյան

«Լույսը լույսով շողշողաց,
Երգը հնչեց սոխակի,
Շողը շողով դողդողաց,
Շուտով արեւ կծագի»: Աթաբեկ Խնկոյան

Բոլոր կենդանիները ստիպված են հաղորդակցվել իրար հետ, եթե նույնիսկ տարվա մեծ մասը ապրում են միայնակ՝ գոնե բազմացման շրջանում եւ ժառանգներին դաստիարակելիս: Շփման առիթները շատ են՝ զգուշացնել վտանգից, ազդանշան տալ կերի առկայության ու տեղի մասին, ծանոթություն հաստատել եւ այլն: Հաղորդակցման համակարգը բարդ է, եւ կատարվում է ոչ միայն ձայնով, այլեւ մարմնի կեցվածքով, շարժումներով եւ հոտի միջոցով:

Ազդանշանների մեծ մասը խիստ տեսակային է, սակայն դրանց մեջ կան նաեւ այնպիսիները, որոնք մյուս տեսակների համար եւս կարող են ծառայել որպես տեղեկատվություն: Օրինակ՝ տագնապի ճիչերը եւ ագրեսիայի նշանները: Որոշ գիտնականներ կարծում են, որ էվոլյուցիոն շարունակականություն գոյություն ունի կենդանիների եւ մարդու լեզվի հաղորդակցման մեթոդների միջեւ, ուրիշներ էլ պնդում են, որ մարդու լեզուն եւ կենդանիների շփումը այնքան տարբեր են, որ հիմքում ընկած սկզբունքները իրար հետ կապ չունեն: Պետք է նկատի ունենալ նաեւ, որ կենդանիները կարող են հաղորդակցվել այնպիսի ձայնային հաճախականություններով, որոնք մարդու ականջի համար ընկալելի չեն:

Այժմ՝ կենդանիների հաղորդակցման համակարգի մի քանի հետաքրքիր դրսեւորումների մասին:

Շունը ցույց է տալիս ատամները՝ նախազգուշացնելով, որ կպաշտպանվի: Արու տրիտոնը էգի հետ ծանոթանալուց լավ վերաբերմունքի արժանանալու համար կանգնում է գլխի վրա ու պոչով կտրուկ շարժումներ է անում, իսկ ծովախեցգետինը թափահարում է իր հսկայական աջ ճանկով: Մեղուն, որ նեկտար է հավաքում եւ ծաղկափոշի, մեղվապարով մյուս մեղուներին փոխանցում է ինֆորմացիա այն մասին, թե որտեղ, ինչ ուղղությամբ եւ ինչքան հեռու են ծաղիկները: Մարգագետնային շները (այդ սկյուռի հեռավոր բարեկամ անպիտան կրծողները), իրենց ձայնով ու վարքով նկարագրում են գիշատիչներին, ասելով նրանց տեսակը, չափը եւ մարմնի ձեւը: Կարծում են, որ նրանք նույնիսկ հասկացնում են՝ արդյոք մարդը զենք է կրում, թե ոչ:

Փայտի մեջ ապրող բզեզի տեսակներից մեկն օգտագործում է Մորզեի այբուբենի նման միջոց: Հաստ ու խիտ ծառերում նրանք փորում են անթիվ ու անհամար թունելներ: Դրանք կանգնում են թունելի վերեւում եւ սկսում գլխով պատերին խփել, որից առաջացած ձայները լաբիրինթոսով հասնում են իրենց խմբակիցներին:

Կարող է տարօրինակ թվալ, բայց մայր հավիկները հաղորդակցվում են դեռ չծնված ճուտիկների հետ. ձվերի ածելուց մոտ 24 ժամ առաջ ճտերն սկսում են ձայներ արձակել, իսկ մայրը քաղցր, բայց մի տեսակ վախենալու կչկչոցով վստահեցնում է, որ ամեն ինչ կարգին է:

Պարզվում է՝ դելֆինները կարող են երկրորդ լեզու սովորել: Երբ նրանց համար միացնում են կետերի ձայներ, դելֆինները երբեք չեն կրկնում ձայներն արթուն ժամանակ, սակայն քնի մեջ նրանք հանում են կետերի ձայները ծայրահեղ նմանությամբ:

Աֆրիկյան մի մոխրագույն թութակ հայտնի դարձավ, որովհետեւ հումորներ էր անում իր տիրոջ հետ՝ ասելով. *«Դու ինձ մի ասա՝ ես ինչ անեմ»*...

Գունային ազդանշաններ օգտագործում են քամելեոնները: Հանդիպելով էգին՝ արուն բազմիցս փոխում է իր գունավորումը: Չկերն ու մի քանի միջատներ օգտագործում են *«լապտեր»*-դա կենսալյումինեսցենցիայի երեւույթն է: Արեւադարձային լուսատիտիկների արուները, նստելով թփերին, լուսային ազդանշաններ են ուղարկում ռիթմերով: Թռչող էգը ամեն մի լույսին պատասխանում է իր լուսային ազդանշանով, որոշակի ինտերվալով, որի մեծությունը եւս ազդանշան է:

Ազդանշանման համար կենդանիները կարող են օգտագործել էլեկտրամագնիսական տատանումներ: Դրանց օգնությամբ ձկների մեծ վտառները համաչափ կատարում են բարդ տեղաշարժեր, իսկ մեղուները մթության մեջ էլեկտրամագնիսական դաշտի բնույթից որսում են հաջողակ ընկերոջ մեղվապարի պատկերները:

Արու թռչունի գարնանային երգը էգին գրավելու ձեւ է, կամ դա զգուշացնում է մյուս արուներին, որ տվյալ բույնը զբաղված է:

Հոտային ազդանշանները հարմար են նրանով, որ կարող են տարածվել զգալի հեռավորությունների վրա կամ էլ կարող են պահպանվել երկար ժամանակ: Օգտագործվում է կղանքը, այլ արտազատուկներ:

Պետք է գիտենալ հետեւյալը. կենդանիները *«խոսում են»* ակամա, հատուկ որեւէ մեկին ուղղված չէ նրանց *«խոսքը»*: Միայնակ ապրող հավը վտանգի պահին, միեւնույն է, կտա ահազանգ, իսկ աքլորը, քանդելով գոմաղբի կույտը, կկանչի գոյություն չունեցող հավերին...

164) Ժեստերի *«լեզուն»*

«Բանաստեղծությունն ռումբ է, որ պայթում է ներսում,
Ժեստ է քարանձավի ու թռիչք է քարի»: Տաթեւ Ոսկանյան

«Քո ժեստը գրված է իմ հոգու մեջ, եւ որքան եմ ուզում գրել ձեր մասին»: Գարսիլասո դե լա Վեգա

Մարդն ինֆորմացիա է հաղորդում ոչ միայն բառերի օգնությամբ, այլ ժեստերի միջոցով, դիմախաղով, հայացքով, մատների շարժումով, կեցվածքով, խոսակցության ժամանակ տարածություն պահպանելով, նաեւ՝ զարդարանքով, հագ ու կապով եւ այլն. դրանց բոլորին անվանում են ոչ վերբալ ազդանշաններ:

Ժեստերի լեզուն ինքնուրույն լեզու է, որ բաղկացած է ժեստերից, որոնցից յուրաքանչյուրն արտահայտվում է ձեռքերով՝ համադրելով միմիկայի, բերանի ու շուրթերի շարժերով, մարմնի դիրքի փոփոխությամբ: Այն ավելի հաճախ օգտագործվում է խուլերի եւ թույլ լսող մարդկանց հետ հաղորդակցվելու համար: Ժեստերը հարկավոր են նաեւ այն դեպքերում, երբ ձայնով հաղորդակցվելը կամ նպատակահարմար չէ կամ էլ հնարավոր չէ:

Երբ խոսքով հաղորդակցվելն անհնար է, մարդը բնազդորեն է դիմում ժեստերի օգնությանը: Լեզվաբանական տեսանկյունից ժեստերի լեզուները (իսկ յուրաքանչյուր խոսակցական լեզվի համար հարմար է դրա ժեստային տարբերակի գոյությունը՝ չկա միջազգային ժեստային լեզու) նույնքան հարուստ են ու բարդ, որքան եւ ձայնային լեզուները: Այդ լեզուները սովորական լեզուների տեսանելի մեկնաբանությունները չեն սակայն. ունեն սեփական քերականությունը, կարող են օգտագործվել ամենատարբեր թեմաներով քննությունների համար՝ պարզ ու կոնկրետից մինչեւ վերացական:

Հատուկ անունները եւ այլ բառեր, որոնք չունեն իրենց ժեստային արտահայտությունը, լրացվում են մատնախոսությամբ: Իսկ ժեստերը պայմանական են, հաճախ կամայական եւ պարտադիր չէ, որ ունեն տեսողական հարաբերություն իրենց մասնակցի հետ, նշանները ժեստերի լեզվում նույնն են, ինչ որ հնչյունները խոսակցական լեզվում. այդ տարրական, անիմաստ միավորներից կազմվում են իմաստալից ու իմաստաբանական միավորներ:

Եթե խոսքին բնորոշ է ընդհանրացումը, ապա ժեստին՝ կոնկրետությունը: Օրինակ՝ չկա մեկ միասնական ժեստ՝ բնութագրելու համար մեծ բառը (մեծ տուն, մեծ շուն, մեծ աշխատավարձ, մեծ մարդ) կամ գնալ գործողությունը (մարդը գնում է, զինվորները գնում են, գնացքը գնում է, նամակը գնում է եւ այլն): Ի տարբերություն բառի, որ անվանում են առարկան, ժեստն այն նկարագրում է: Ժեստերը միշտ կերպարային են: Օրինակ՝ տուն ցույց տալիս ժեստը կարող է լինել այսպիսին-ձեռքերի դաստակները տանիք են կարծես պատկերում, գիրք ասելիս՝ էջեր թերթում, սիրել՝ հպվել սրտին, բարեկամանալ՝ ձեռքսեղմում ցուցադրել եւ այլն: Հետաքրքիր է, որ ժեստերի լեզուն հաջողվել է ուսուցանել մարդնման կապիկներին եւ այդպիսով հաղորդակցվել նրանց հետ, ովքեր այդ շարժումներում սեփական *«իմպրովիզներն»* էին անում:



Դիմախաղի արքա՝ **Ռոուեն Ատկինսոն**

Պարզվում է, որ որոշակիորեն կարելի է կարդալ մարդկանց մտքերը՝ վերլուծելով նրանց ակամա ծագող ժեստերը: Օրինակներ:

Կարդալով շրթունքները: Շուրթերի մի փոքր ծգելը ժեստ է, որը ցույց է տալիս, որ զրուցակիցը համաձայն չէ: Որքան ավելի ինտենսիվ է ծգումը, այնքան մեծ է տարաձայնությունը:

Երբ զրուցակիցը կրծում է իր շրթունքը, որը բաղկացած է ստորին կամ վերին շրթունքի փափուկ խայթոցից, սա նշանակում է, որ մարդը ցանկանում է ինչ-որ բան ասել, բայց չի համարձակվում. սովորաբար, մարդիկ չեն ասում այն, ինչ մտածում են, քանի որ կարծում են, որ վիրավորելու են ուրիշներին:

Կարդալով աչքերը: Հույզերը կարող են փոխել թարթելու հաճախությունը: Մեկ րոպեի ընթացքում 6-ից 10 անգամ թարթելը կարող է նշան լինել այն բանի, որ անձը գրավում է դիմացինին: Բացի այդ, ավելի շատ թարթելը կարող է ցույց տալ, որ անձը նյարդայնանում է:

Կարդալով հոնքերը: Մարդիկ հոնքերը բարձրացնում են, երբ ուզում են իրենց ավելի լավ հասկանալ: Դա նաեւ վկայում է համակրանքի, կարեկցանքի եւ դիմացինի հետ շփվելու ցանկության մասին:

Կարդալով հայացքը: Հաղորդակցման այս մոդելի համաձայն՝ ձախ նայելը ցույց է տալիս, որ ինչ-որ բան հիշվում է: Դեպի աջ նայելը ցույց է տալիս, որ ստեղծվում են մտքեր կամ պատկերներ, որոնք ոմանք մեկնաբանում են որպես ստախոսություն: Ձախլիկների մոտ հակառակն է:

... Համառոտ խոսենք պարի՝ ամենասիրված (գուցեեւ՝ ամենահին) արվեստի ձեւերից մեկի մասին: Ի վերջո այն եւս ժեստերի համակարգ է, որի նպատակն է՝ մյուս մարդկանց հաղորդել ցնծությունը, վիշտն ու հոգին համակած այլ հույզերը: Պարի լեզուն, ինչպես եւ ժեստերի լեզուն, ունիվերսալ է: Հնում հավատում էին, որ պարի օգնությամբ հաղորդակցվում են Աստծո հետ, մոտենում նրան: Նրան ճիշտ դիմելու դեպքում Աստված պարգեւատրում էր՝ բերքով, անձրեւով, արեւով: Ծիսական պարը յուրինակ նկար էր, աղոթք, որ արվում էր մարմնի լեզվով: Դիմախաղը, ձեռքերի, մատների շարժը, տարազը պարի արտահայտչականության կարեւոր տարրերից են: Կատարման տեխնիկան՝ մարմնին տիրապետելու աստիճանը, հիմնական պարաքայլերի ու դիրքերի անցման վարպետությունը պարողի կատարողականի բնութագրեր են: Պարը բնորոշվել է՝ որպես մարմնի շարժումների միջոցով հոգեկան խոր ապրումների, հույզերի, զգացումների անկեղծ, անմիջական, ազատ արտահայտում: Ռիթմը, պարի *«գծապատկերը»*, դինամիկան տվյալ ազգի մշակույթի ցայտուն դրսեւորումներից են:

Զարուհի ՊԵՏՐՈՍՅԱՆ
Սիդա ՊԵՏՐՈՍՅԱՆ

Եղիշե Չարենցի կյանքն ու ժամանակը. 1920 թվական

սկիզբը՝ էջ 7

Նրանց համար ձեռքերի թափահարումներով, օրորումներով արտասանել է նաեւ Տերյան. *«Հետո մռայլվում էր, նյարդայնանում, ուզում էր մի բան ջարդել: Մի անգամ, հիշում եմ, ձեռքից գցեց բաժակը, կոտրեց, հետո զղջաց, խաղաղվեց, ժպտաց մանկան անմեղությամբ»* (*«Հուշեր Եղիշե Չարենցի մասին»*, 1986, էջ 112):

Ըստ Ջանիկյանիի՝ Չարենցը պատմել է Կարսի կյանքից, հիշել բերդը, գետը… 1920, հունիս – Քանաքեռի բարձունքում սարքավորումներով համալրվում է Երեւանի ռադիոկայանը: *«Մշակ»*-ը (8 հունիս) հաղորդում է. *«Իտալական թագավորական շտաբի գնդապետ Գաբբուն հունիսի 7-ին 13 արկղ իրեր ստացավ՝ Երեւանում հիմնվող նոր ռադիոկայանի համար»:*

Ռադիոկայանը կառուցվել էր նախորդ տարի. *«Նույն [1919 թ.] հոկտեմբերին արդեն վերջացել էր կառուցումը Երեւանի ուժեղ ռադիոկայանի, որ գործում էր մինչեւ Բասրա, Թաշքենդ ու Հաշտարխան»* (Ս. Վրացյան, *«Հայաստանի Հանրապետություն»*, 1982, էջ 353):

Երեւանի նորակառույց հզոր ռադիոկայանը կենդանի ռադիոկայան է դառնում նաեւ Չարենցի պոեզիայի համար: Սրանք ամենեւին պատահական զուգադիպություններ չեն: Եվ իզուր չէր Չարենցն աշխարհով մեկ աղաղակում.

Ռադիոկայան է իմ հոգին հիմա
Ամբո՛ղջ աշխարհի
ու մարդկանց հանդեպ.
Ու բա՛ցծր է, բա՞ցծր է կայանն իմ հոգու՝
Մասիսի նման բա՛ցծր է ու հաստատ–
Հզո՛ր, ահարկո՛ւ (ԵԺ, II, էջ 100):

Ըստ Գ. Ղարիբջանյանի՝ մայիսի 1-ին տեղի ունեցած ցույցի օրը *«Երեւանի բոլշեւիկներին հաջողվել է օգտագործել ռադիոկայանը եւ ողջույնի ռադիոհեռագրեր ուղարկել Մոսկվա, Բաքու»:*

Այնքան նշանակալից էր Ռադիոյի մուտքը Հայաստան, որ Մահարու եղբայր Խորեն Աճեմյանը ընդունում է Խորեն Ռադիո գրական անունը: Չարենցը հեգնել է, խորհուրդ է տվել փոխել: Ապարդյուն՝ ռադիոպոեմ կլինի՛, Խորեն Ռադիո չէ՝ ...

1920, հունիս – Երեւանում լույս է տեսնում Չարենցի *«Բոլորին, բոլորին, բոլորին (Երեք ռադիոպոեմ)»* գիրքը. զետեղված են *«Նայիրի երկրից»*, *«Դեպի ապագան»*, *«Բրոնզե թեւերը կարմիր գալիքի»* ռադիոպոեմները (թվագրել է 1920, մարտ - հունիս):

Գրքի տպագրությունը կազմակերպում է Նիկոլ Աղբալյանը:

Հոկտեմբերյան հեղափոխության լուրը Սմոլնիից աշխարհում տարածվեց հենց այդ կոչով. *«Всем! Всем! Всем!»:*

Ըստ Մահարու՝ գիրքը պայթեց ռումբի պես: Պոեմները Խանջյանն արտագրում է ծոցատետրի մեջ: Չարենցը կերտում է իր պատմական կերպարը եւ այդուհետեւ դառնում իր օրերի պատմիչ.

Ե՛ս – ե՛ս եմ նորից.–
Դարերից եկած անհո՞ւն մի պոետ–
Եղիշե Չարենց–
Նայիրի երկիր, քո երգիչը վառ,
Օրհներգուն պայծառ
Ու զավակը մեծ…
Ե՛ս – ե՛ս եմ նորից.–
Ոսկի երակը հընամյա ցեղիս,
Իմ ջլաբազուկ հաղթ ժողովրդի
Օղակը վերջին (ԵԺ, II, էջ 98-99):

Տերյան. *«Մի՞թե վերջին պոետն եմ ես»* – Չարենց. *«Օղակը վերջին»:*

Գրքի վերջին էջում տպագրված է Չարենցի հրատարակած եւ հրատարակելիք գրքերի ցուցակը: Ըստ ծանուցման՝ *«Ողջակիզվող կրակ. Բանաստեղծություններ»* գիրքը պետք է լույս տեսնի Թիֆլիսում, *«Պատրաստ են հրատարակությանե՝ «Էմալե պրոֆիլը Չեր. գալանտ երգեր», «Մարդերգություն. պոեմներ մարդու մասին», «Ազգային երազ. սատիրական պոեմ»: «Ողջակիզվող կրակ», «Էմալե պրոֆիլը Չեր»* շարքերը եւ *«Ազգային երազ»* պոեմն առանձին լույս չտեսան, տպագրվեցին ԵԺ-ում (1922): *«Մարդերգություն. պոեմներ մարդու մասին»* գրքի բովանդակությունն անհայտ է: Հիշեցնենք, որ *«Մարդերգություն»* վերնագրով պոեմ 1909-ին գրել է Ռուբեն Սեւակը:

Նախատեսել էր նաեւ *«Գազելների գիրք»* (*«Մորս համար գազել»*-ը *«Հայաստանի կոոպերացիա»*-ում տպագրվել է *«Գազելների գրքից (Մորս համար գազել)»* վերնագրով, 1920, թիվ 12) եւ *«Բրոնզե գիրք»* (*«Աստղիկ»*-ը նույն *«Հայաստանի կոոպերացիա»*-ում տպագրվել է *«Բրոնզե գրքից»* հղումով, 1920, թիվ 17): Գազելներ գրել էր, իսկ *«Բրոնզե գրքի»* մեջ ենթադրաբար կարող էին մտնել *«Ողջակիզվող կրակ»* շարքի *«Առավոտ»* ենթաշարքը, գուցեեւ՝ *«Ութնյակներ արեւին»* շարքը:

1920, 15 հունիս – *«Հայաստանի կոոպերացիա»*-ում (թիվ 11) *««Լյուսի Թառայանին» գրքից»* խորագրով տպագրում է *«Բրոնզե քո՛ւյր իմ, բրոնզե քո՛ւյր իմ, բրոնզե հարս»* բանաստեղծությունը: 1922-ին զետեղել է *«Ողջակիզվող կրակ»* շարքի *«Առավոտ»* ենթաշարքում: Այս բանաստեղծության մասին տես *«1929, նոյեմբեր»* տարեթվի ներքո:

1920, 20 հունիս – Կիլիկիան անկախություն է հռչակում: Կիլիկիայի արտաքին գործոց նախարար Զապել Եսայանը օգնության խնդրագրերով ապարդյուն դիմում է ֆրանսիական կառավարությանը:

1920, 1 հուլիս – *«Հայաստանի կոոպերացիա»*-ում (թիվ 12) *«Գազելների գրքից»* խորագրով տպագրվում է *«Մորս համար գազել»*-ը: Հայրենի տուն, տան առջեւ թթենու ստվերի տակ նստած մայր, որ հիշում է անցած ու դարձած օրերը, տնից հեռացած ու անհայտության մատնված որդու կերպար, որից լուր չունի, եւ որի կարոտից հոսում են նրա դառնաղի արցունքները: Որբության մատնված սերունդի ճակատագիրն է:

Այդ կապակցությամբ ասել է. *«Ես ջահել ժամանակ հիսուն հատ գազել էի գրել. բոլորն այրեցի ու թողեցի միայն մորս նվիրված գազելը: Մնացածները չնչին բաներ էին ու նորություն չէին բերում ոչ թեմայով, ոչ էլ ձեւով ու տաղաչափությամբ»:*

Նույն ոգով շարունակում է եւ ասում, որ Թումանյանի քառյակների ազդեցությամբ Գառնիկ Քալաշյանը քառասուն քառյակ է գրել ու կարդացել: Ինքն ասել է. *«Գառնի՛կ, տար ճղի, դրանցից ոչ մեկն էլ բանի նման չէ»:* Քալաշյանը վրդովվել է, թե՝ նախանձում ես: Հենց այդ գիշեր վաթսունհինգ քառյակ է գրում, թեեւ հարյուրն էր խոստացել: Հաջորդ օրը նույն խմբի առջեւ կարդում է եւ պատռում թափում (*«Չարենցի հետ: Հուշեր»*, 2008, էջ 169):

Ուշագրավ զուգահեռ *«Մորս համար գազել»*-ին. նույն խոր հուզականությամբ Երվանդ Քոչարը (1899-1979) 1919-ին կերտել է *«Նկարչի մոր դիմանկարը»*, Արշիլ Գորկին (1904-1948)՝ *«Նկարիչը եւ մայրը»*: Համաստեղը (1895-1966) ունի *«Մայր իմ անուշ…»* վերնագրով անթվակիր բանաստեղծություն՝ խորապես ազդված Չարենցից: Ընդհանրությունն ակնհայտ է՝ տարբերակ լինելու աստիճանի.

Ես կը սիրեմ քու դեմքը, քու դեմքը,
մայր ի՛մ անուշ,
Խաղաղությունն աչքերուդ, նույնքան
բարի ու անուշ:
Ես կը սիրեմ ճակատդ, ճակատդ
վաղուց խորշոմած,
Եվ քու վարսերդ արծաթե, վարսերդ,
մա՛յր իմ անուշ:
Ես կը սիրեմ ձեռքերդ կապույտ
երակ գիծերով,
Խորշոմները քու դեմքիդ, քու դեմքիդ,
մա՛յր իմ անուշ:
<…>: Երբոր լուռ ես ու նստած,
շալ մը ծգած ուսերուդ,
Իլիկն է, որ կը մանես
հին օրերու հուշերուդ:
Կը հիշես տունն հայրենի,
ճամփաները արեւառ,
Ուրկե անցած ես թեթեւ՝
հովերուն հետ բռնած պար:

<…>: Թափառեցա երկիրներ,
ճամփաներով շատ անցա,
Տեսա զրկանք, տեսա ցավ,
սեր ու խնդում ես տեսա,
Բայց չըտեսա, չըգտա
ոչ մեկ սիրտ այնքան արի,
Քու հոգիիդ չափ արի,
մայր իմ անուշ ու բարի:

Հենց միայն *«Մայր իմ անուշ»* կրկներգը չարենցյան հիմնային ազդակ է. նույնն է խոսքի չափական կառուցվածքը, հնչերանգն ու տրամադրությունը, ինչպես նաեւ պատկերային ատաղձը՝ ընդհուպ առանձին արտահայտություններ ու դարձվածքներ: Այս կապակցությամբ *«Հայրենիքում չգնահատված տաղանդավոր գրողը՝ Համաստեղ»* հոդվածում Գեւորգ Էմինը շտապեց սխալվել, թե Համաստեղի *«…անվիճելի ազդեցությամբ է գրել Մեծն Չարենցը իր «Մա՜յր իմ անուշ» գազելը»* (*«Ազգ»*, 1996, 23 հունվար): Մինչդեռ Համաստեղի բանաստեղծությունը գրվել եւ տպագրվել է Չարենցի գազելից քսան տարի հետո (*«Հայրենիք»*, 1941, թիվ 6), ունի անմիջական ազդակ, որ իր մոր՝ Գոհար Կելենյանի (1878-1941, 24. V) մահն է, եւ ունի ձոն՝ *«Նվեր մորս եւ բոլոր մայրերուն»:*

1920, 15 հուլիս – *«Հայաստանի կոոպերացիա»*-ն (թիվ 13) բաժին է հատկացնում՝ նվիրված Տերյանի մահվանը: Չարենցը տպագրում է *«Վահան Տերյանի հիշատակին»* բանաստեղծության I եւ II մասերը (ամբողջությամբ՝ *«Երկերի ժողովածու»*, 1922): Բացվում է Զորյանի *«Վահան Տերյան»* ընդարձակ հոդվածով, որ ե՛ւ մահախոսական է, ե՛ւ գնահատություն, շարունակվում Անանունի *«Հանդիպումներ Վ. Տերյանի հետ»* հուշագրությամբ:

Զորյան. *«Այն բանաստեղծը, որ հայ լեզուն հասցրել է մի զարմանալի նրբության ու կատարելության, տալով նրան արտահայտելու մոգական կարողություն, նա, որի երգերն իրենց անկեղծ, լուսեղեն զգացումներով ու հմայիչ նվագայնությամբ դյութում են ամեն մի կիրթ մարդու, նա, որ մի ամբողջ տասնամյակ է ահա իր ազդեցությամբ իշխում է մեր բանաստեղծության աշխարհում,- այդ բանաստեղծի մահը մատնվում է անուշադրության միայն նրա համար, որովհետեւ նա եղել է կոմունիստական կուսակցության անդամ:*

Մի՞թե Վահան Տերյանը պատկանում է միայն այդ կուսակցության եւ ոչ Հայաստանի այսօրվա եւ ապագա ժողովրդին, որ միշտ պիտի պարծենա նրանով: Մի՞թե բոլոր այս ազատական վերիվարումներից հետո, հայ միտքը դարձյալ քարացած է մնացել աղանդավորության կծեպի մեջ, որ չի կարողանում զանազանել ներկային ու ապագային պատկանող, հանրության սեփականություն կազմող բանաստեղծին մի սոսկ կուսակցությունից:

Տխո՜ւր իրականություն:

<…> այժմ նրա բանաստեղծությունները կարդացվում են տներում, արտասանվում են երեկույթներում ու հավաքույթներին, բայց նրանց հեղինակի մահը մատնված է անուշադրության:

Սակայն հայ գրականության պատմությունը այսօրվա մեր հասարակության պես ապերախտ չի գտնվի եւ միշտ ցավով կհիշի այն դժբախտ պոետին, որ հանգավ հեռավոր Օրենբուրգի ցուրտ մշուշներում» (Ս. Զորյան, ԵԺ, XII, 1990, էջ 131, 138):

1920, ամառ – Ավարտում է *«Ողջակիզվող կրակ»* շարքը: Բաղկացած է երեք ենթաշարքից՝ *«Իրիկունը»*. գրել է 1918 թ. փետրվար-մարտին, Թիֆլիսում, ընդգրկում է 18 գործ, *«Վերադարձ»*. գրել է 1918-ի հունիսին Հյուսիսային Կովկասում, քառամաս 104 տողանոց գործ է, *«Առավոտ»*. գրել է 1919-1920 թթ. Կարսում եւ Երեւանում, ընդգրկում է 22 գործ: Շարքն ամբողջությամբ տպագրվել է ԵԺ, I հատորում (1922):

Չարենցի առաջին գրքի վերնագիրը *«Երեք երգ…»* էր, նրա համար *«Ծիածանը»* եռագույն էր եւ ոչ թե յոթնագույն, *«Ողջակիզվող կրակ»* շարքը՝ եռամաս, հետեւապես պետք է կյանքի կոչվեր *«Երեքի»* դեկլարացիան: Ո՞րն է այս երեքի խորհուրդը՝ Հայոց պետականության եռագույն դրո՛շն է, Տիրոջից խնդրվող Հույս, Հավատ, Սեր աղերսա՛նքը, մեղեսիկի Խեր, Շառ, Աստված բախտագուշա՛նքը, երկնքից ընկնող հեքիաթի երեք խնձո՛րը… Պատահականությունը բացառվում է: Երեքի խորքում երբեմն չգիտակցված Աստված, Սուրբ հոգի, Քրիստոս եռամիասնությունն է: Քրիստոնեական այս թվային խորհրդանշանները շատ ցայտուն են Դանտեի *«Աստվածային կատակերգություն»* եռատողերով գրված եռամաս պոեմում, որին Չարենցը դեռ պետք է անդրադառնար:

1920, ամառ – Երեւանում ծանոթանում ու մտերմանում է բուլղարահայ, անգլերենի թարգմանիչ Նվարդ Փիջիյանի (Բիչիյան) հետ, Չարենցի հանդիպումներն ավարտվում են Վարդավառի տոնը հուլիսին միասին Զանգվի ափին անցկացնելով: Նրան է նվիրել *«Սիրելի օր. Նվարդի համար»* բանաստեղծությունը:

1920, 5 օգոստոս – Նամակ է հղում կառավարության նախագահ եւ արտաքին գործոց նախարար բժիշկ Համո Օհանջանյանին՝ կանխելու իր դեմ հերյուրված զրպարտությունը, ըստ որի՝ ինքը, իբր, սադրել է 13-րդ որբանոցի ավագ որբերին՝ չենթարկվելու իշխանությունների հրահանգներին, ինչի համար փնտրում են իրեն, որպեսզի ձերբակալեն: Նաեւ հայտնում է, որ վերջին ժամանակները ծանր հիվանդ է՝ 39,9 աստիճան բարձր ջերմությամբ հիմնականում տանն է՝ գամված անկողնուն (ԱՉԵ, էջ 452-453):

1920, 6 օգոստոս – *«Հայաստանի ձայն»* թերթում (թիվ 106) լույս է տեսնում Միսակ Խոստիկյանի գրախոսականը *«Բոլորին, բոլորին, բոլորին (Երեք ռադիոպոեմ)»* (1920) գրքի մասին. *«Ե. Չարենցն իրավ որ գյուտ է, մի արժեքավոր մեծություն մեր կյանքում վխտացող <…> անսիրտ վիժվածքների հանդեպ, որովհետեւ Չարենցը ազնիվ գաղափարական երկունք է ապրում, ստեղծագործության վեհ տաճարին յուր լուման նվիրաբերում եւ ոչ թե չունենալով ոչինչ, եղածն էլ խորտակում է, ինչպես անում են Ռուսաստանի ստեպներում արածող բոլշեւիկ հայերը»:*

Այս գրախոսության մեջ Չարենցին հասցեագրված դիտողությունները տպագրվել են ՀՅԴ Շիրակի կենտրոնական եւ Ալեքսանդրապոլի տեղական կոմիտեների օրգան *«Շիրակի աշխատավոր»*-ում՝ նոր հեղինակի ստորագրությամբ՝ Ազգին (Ասքանազ Մարտիրոսյան), ով զբաղվել է բանագողությամբ եւ, որպես դաշնակցական, միտումնավոր աղավաղել գրքին տրված Խոստիկյանի գնահատականը:

շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի պետական տեխնոլոգիական քոլեջ»* ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ հետեւյալ *«Պատմության», «Հայոց լեզվի եւ գրականության», «Տեղեկատվական տեխնոլոգիաների հատուկ մասնագիտական մոդուլների մասնագետ»* դասախոսի թափուր տեղերի համար:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝

1. դիմում (լրացվում է տեղում),

2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճեն),

3. անձնագիր (բնօրինակը եւ պատճեն),

4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5. ինքնակենսագրություն (Ձեւ 4),

6. մեկ լուսանկար՝ 3Χ4 չափի,

7. այլ պետությունների քաղաքացիները? ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ? ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճեն),

9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ հոկտեմբերի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյտեմբերի 2-ին՝ ժամը 14:00-ին***, Երեւանի պետական տեխնոլոգիական քոլեջում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 48-06-41, (094) 72-74-83 հեռախոսահամարներով, էեկտրոնային հասցեն՝ eptq11@mail.ru:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ»-ի՝ «Առեւտրային համակարգչային ծրագրեր ՀՇ-առեւտուր համակարգ», «Ձեռներեցություն», «Պարարտանյութերի տեսակները եւ օգտագործումը», «Գյուղատնտեսական մթերքների պահպանում եւ վերամշակում», «Դաշտային մշակաբույսերի մշակության եւ բերքահավաքի տեխնոլոգիա», «Բույսերի աճման եւ զարգացման համար անհրաժեշտ գործոնները», «Գյուղատնտեսական բեռների եւ արտադրանքի, տեղափոխում, պահեստավորում, բաշխում», «Գյուղատնտեսական մեքենաների եւ սարքավորումների շահագործում», «Կերային մշակաբույսերի եւ բուսական ծագման կերերի արտադրության տեխնոլոգիաները», «Լանջերի վրա բազմամյա տնկարքների հիմնման տեխնոլոգիաները» առարկաների (մոդուլների) դասախոսի թափուր տեղերի համար՝

Մանկավարժի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջները.

- Բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ:

Պահանջվող փաստաթղթերի ցանկը՝

1. դիմում,

2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),

3. անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5. ինքնակենսագրություն,

6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ***2022 թ. նոյեմբերի 2-ից մինչեւ նոյեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 16-ին՝ ժամը 13:00-ին,*** էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 55-22-72 հեռախոսահամարով:

Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ *«Արարատի պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ *«Կենսաբանություն»* առարկայի (652 դասաժամ) բարձրագույն մասնագիտական կրթության որակավորմամբ դասախոսի թափուր տեղի համար:

Ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային փորձ:

Մրցույթին մասնակցելու համար անձը Հաստատություն է ներկայացնում.

1) դիմում (Ձեւ 1),

2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),

3) անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (Ձեւ 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ***հոկտեմբերի 26-ից մինչեւ նոյեմբերի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 10-ին՝ ժամը 14:00-ին,*** *Արարատի պետական քոլեջում,* հասցեն՝ ք. Արարատ, Խանջյան 67:

Տեղեկությունների համար զարգահարել՝ (0234) 4-41-01, (099) 97-27-47 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

«Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ *«Մաթեմատիկա»*, ծանրաբեռնվածությունը՝ 720 ժամ, *«Ռուսաց լեզու»*, ծանրաբեռնվածությունը՝ 500 ժամ, *«Ինֆորմատիկա»*, ծանրաբեռնվածությունը՝ 576 ժամ (նշված առարկաները կարող է դասանդել այն անձը, որը ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն եւ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ) առարկաների, մոդուլների եւ մասնագիտությունների դասախոսախոսների թափուր տեղերի համար:

Դասախոսի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձեւ 1),

2) կրթուրյան մասին հաստատող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),

3) անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (Ձեւ 4)

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետությունում համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիները.

8) Հայաստանի Հանրապետությունում արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

9) Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

10) Ըստ պաշտոնի հավակնորդի հայեցողության՝ գիտամանկավարժական գործունեությունը բնութագրող այլ փաստաթղթեր:

Մրցույթին մասնակցելու համար դիմումները (փաստաթղթերը բնօրինակներով), ներկայացնել ***2022 թ. հոկտեմբերի 26-ից մինչեւ նոյեմբերի 8-ը ներառյալ՝ ժամը 10:00-ից 16:00-ն (բացի շաբաթ, կիրակի եւ հանգստյան օրերից),*** *«Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ»* ՊՈԱԿ-ի մրցույթաի հանձնաժողովին, հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզի գ. Նոր Գեղի, փողոց Ուսանողական 5):

Մրցույթը տեղի կունենա ***նոյեմբերի 9-ին՝ ժամը 11:00-ին,*** Կոտայքի մարզի *«Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ»* ՊՈԱԿ-ում:

